Ազգ
Azg
26 ՅՈՒԼԻՍ 2013 ՈՒՐԲԱԹ 128(5211)
ISSN: 1829-1651
9 771829 165003 13128

# Պուտինը մեկնում է Ադրբեջան՝ նախագահի թեկնածու «առաջադրելու» Մեհրիբան Ալիեւայի՞ն

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի կողմից APA գործակալությանը հայտնած՝ Վլադիմիր Պուտինի Ադրբեջան մեկնելու մասին տեղեկատվությունից տառացիօրեն ժամեր անց ռուսաստանյան մի շարք լրատվամիջոցներում միաժամանակ տարածվել է անցած նախագահական ընտրություններում Պուտինի վստահված անձ, Ռուսաստանի ադրբեջանական համայնքի պատվավոր նախագահ, այսպես կոչված «միլիարդատերերի ակումբի» անդամ Սոյուն Սադիկովի հոդվածը:

Այն նվիրված է նախագահական ընտրությունների նախօրյակին Ադրբեջանում ստեղծված ներքաղաքական իրավիճակին: Վերլուծելով իրավիճակը՝ Սադիկովը գտնում է, որ «Իլհամ Ալիեւը կհաղթի ընտրություններում, բայց՝ շնորհիվ վարչական ռեսուրսի գործադրման, եւ ժողովուրդը նրան որպես լեգիտիմ նախագահի չի ընդունի»: Նա կանխատեսում է, որ իրադարձությունների նման զարգացման դեպքում «անհնար կլինի խուսափել բախումներից»:

Իբրեւ ելք՝ Սադիկովը զարգացնում է Մեհրիբան Ալիեւային նախագահի թեկնածու առաջադրելու տարբերակը: Ի շարս այլ հիմնավորումների, նա, մասնավորապես ընդգծում է, թե «հնարավոր է հենց նրան՝ կնոջը եւ մորը կհաջողվի լուծել Ադրբեջանի համար առանձնահատուկ ցավալի՝ Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ առաջարկելով դրա լուծման իրոք նոր տարբերակներ»:

Նկատենք, որ ավելի վաղ Մեհրիբան Ալիեւային նախագահի թեկնածու առաջադրելու նախաձեռնություն ցուցաբերած «Ադրբեջանի ժողովրդավարական երկիր» կուսակցության պատասխանատուները նույնպես նրա հետ էին կապել ԼՂ հիմնախնդրի խաղաղ կարգավորման հեռանկարը: Եվ եթե Ռուսաստանի ադրբեջանական համայնքի պատվավոր նախագահը, որ նաեւ «միլիարդատերերի ակումբի» անդամ է, նույնպես շեշտադրում է այդ հանգամանքը, ապա կարելի է ենթադրել, որ Ադրբեջանի քաղաքական եւ հասարակական բավական ազդեցիկ շրջանակներ պարզապես չեն ընդունում ղարաբաղյան կարգավորման հարցում Իլհամ Ալիեւի չափազանց կոշտ եւ տարածաշրջանի համար վտանգավոր զարգացումներ սադրող դիրքորոշումը:

Տես էջ 3

# Սակագինն առայժմ մնում է նույնը, ի՞նչ կհաջորդի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Մինչ ուղեվարձի թանկացման դեմ հասարակական ընդվզումը նորանոր ձեւեր էր ընդունում, ու անգամ երեկ տարբեր լուրեր կային երկկողմանի սադրանքների վերաբերյալ, նույնիսկ լուր եղավ թիվ 67 երթուղու վարորդի դանակահարման փաստի մասին, երեկոյան քաղաքապետ Տարոն Մարգարյանի ուղերձով ամեն ինչ փոխվեց: Չնայած թվում էր, թե ցերեկվա որոշումները 150-դրամանոց սակագինը թողնելու օգտին են, քանի որ **Տարոն Մարգարյանը** Երեւանի ավագանու խմբակցությունների հետ հանդիպման ժամանակ խոսում էր խոցելի խմբերին հնարավորություններ տրամադրելու, եւ ոչ թե 150 դրամ սակագինը վերանայելու մասին, այնուամենայնիվ երեկոյան ուղերձով քաղաքապետը կասեցրեց իր հուլիսի 19-ի որոշումը՝ տրանսպորտի սակագինը 150 դրամ դարձնելու վերաբերյալ, ուղեվարձն առայժմ թողնելով նախկինը: Հետաքրքրական է բավական էմոցիոնալ այդ ուղերձը, որտեղ քաղաքապետը խոստովանում է, որ ներքաղաքային ուղեւորափոխադրումների վարձը վերանայելու որոշումը քաղաքապետի պաշտոնում կայացրած իր թերեւս ամենածանր որոշումն էր, եւ որ՝ խնդիրը լուծում էր պահանջում շատ վաղուց: Քաղաքապետի պաշտոնն ստանձնելու առաջին իսկ օրվանից նա առաջնահերթ խնդիրներից է համարել Երեւան քաղաքի տրանսպորտային համակարգի հետեւողական արդիականացմանը զուգահեռ ուղեվարձն անփոփոխ թողնելու ուղիների որոնումը.

Տես էջ 2

# Արցախին ԱՄՆ աջակցությունը կպահպանվի

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի հատկացումների հանձնաժողովը չորեքշաբթի՝ հուլիսի 24-ին հաստատել է 2014 ֆինանսական տարվա մասին արտաքին աջակցության օրենքի աջակցությունը Լեռնային Ղարաբաղին:

«Ասպարէզ» սփյուռքյան պարբերականի տեղեկացմամբ՝ չնայած 2014 ֆինանսական տարում ամերիկյան Կոնգրեսը կրճատել է գրեթե բոլոր տեսակի ծախսերը, այս մասին, այդուհանդերձ, օրինագծում որոշակի չի նշվում նաեւ Հայաստանին տրամադրվելիք օժանդակության մասին:

Ներկայացուցիչների պալատին ներկայացվելիք օրինագծում նշվում է, թե ԱՄՆ պետքարտուղարության կողմից տրամադրվելիք միջոցները, նախորդ տարիների նույն չափով, պետք է օժանդակություն լինեն ղարաբաղյան հակամարտության զոհերին եւ տրամադրվեն հակամարտությանն առնչվող առկա կարիքների համար:

Ամերիկայի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանի խոսքերով, Կովկասում Լեռնային Ղարաբաղին այդքան ուշադրություն դարձնելու եզակիությունը, որ ներկայացվում է որպես հանձնաժողովի առաջնահերթություն, հատկապես նշանակալի է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014-ի ֆինանսական ծախսերը բավականին մեծ ծավալներով կրճատված են, որոշ երկրների տրամադրվող աջակցությունը պակասել է, որոշ աջակցության ծրագրեր էլ ընդհանրապես հանվել են:

Համբարյանը, միեւնույն ժամանակ, մտահոգություն է հայտնել, որ Ներկայացուցիչների պալատ ներկայացվելիք այս տարվա արտաքին աջակցության օրինագիծը Հայաստանին տրամադրվելիք աջակցության որեւէ որոշակի չափ չի նշում՝ Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ:

Վ. Պ.

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Գուրգեն Մահարու 110-ամյակին (1903 թ., օգոստոսի 1) նվիրված Գրիգոր Աճեմյանը ներկայացնում է «Մահարու թատրոնը» հրապարակումը:

Մոռացված դեմքեր. Բախտիար Հովակիմյանը՝ ժամանակին հայ եւ ռուս բեմերի նշանավոր դերասանուհի Իզաբելլա Քալանթարի կյանքի եւ ստեղծագործության մանրամասներ:

Անժելա Սահակյանի հանդիպումը բեմադրիչ, դերասան Ժիրայր Բաբազյանի հետ, փարիզյան իր բնակարանում:

Գոհար Աճեմյանի հարցազրույցը ֆրանսահայ պատմաբան Արմեն Կլոդ Մութաֆյանի հետ՝ «Միջերկրականյան Հայաստանը» կամ «Կիլիկյան թագավորությունը՝ Մեծ Հայքը XI-XIV դարերում» ուսումնասիրության առիթով:

«Հայերեն ձեռագրերի հետքերով». ջավախահայերի այս տարվա մայիսյան նվիրաբերումները՝ Մաշտոցի անվան մատենադարանին:

Մեր հանդիպումը «Քովենտ Գարդեն» Լոնդոնի արքայական օպերային թատրոնից աշխատանքային հրավեր ստացած Երեւանի կոնսերվատորիայի շրջանավարտ, սոպրանո Անուշ Հովհաննիսյանի հետ:

Մ. Բ.

# Սիրիայում հարյուրավոր ապստամբներ անցնում են կառավարական ուժերի կողմը

Սիրիայի հակամարտության մեջ անսպասելի շրջադարձ է կատարվում: Ապստամբներից ոմանք զենքը սուսուփուս վայր են դնում եւ անցնում կառավարական ուժերի կողմը: «Դեյլի թելեգրաֆ» թերթի տվյալներով, խոսքն առայժմ հարյուրավոր դասալիքների մասին է, բայց եթե նրանք հաջողությամբ մերվեն խաղաղ կյանքին, նրանց օրինակին կարող են հետեւել հազարավոր համախոհներ:

Ապստամբների անձնատվության պատճառներն են իշխանությունների հայտարարած համաներումը եւ հիասթափությունը հեղափոխության իդեալներից: «Ես մարտնչել եմ հանուն հեղափոխության, բայց հիմա կարծում եմ, որ մենք կորցրել ենք այն իդեալները, որոնց համար կռվում էինք», ասում է ապստամբական ուժերի նախկին մարտիկ Մուհամմեդը, որը Ռաքքա քաղաքից է:

Նա պատմում է, որ երբ ծայրահեղականները գրավել են քաղաքը, իր ընտանիքը ապահովության նկատառումներով փախել է կառավարական ուժերին ենթակա տարածք: «Ասադը սարսափելի է, բայց այլընտրանքը էլ ավելի վատն է», կարծում է նախկին ապստամբը:

«Դեյլի թելեգրաֆի» թղթակիցը Դամասկոսում գերատեսչության կենտրոնակայանում տեսել է ապստամբների ընտանիքների բազմաթիվ անդամների, որոնք ուզում էին, որ իրենց մերձավորները վայր դնեն զենքը եւ անձնատուր լինեն իշխանություններին: Շատերի համար դա վերջին հնարավորությունն է:

# Հայաստանին միշտ պետք է մեկը ճնշի՞

*Ասոցացման համաձայնագիրը որոշ ուժերի բկին է մնացել, որոնք ամեն ինչ անում են, որ Հայաստանը հայտնվի այդ վիճակում*

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ




Երբ հայտարարվեց, որ Հայաստանն ու Եվրոմիությունն ավարտել են Խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագրի բանակցությունները, վերջին շրջանում ռուսաստանյան ներկայության, ավելին՝ դերակատարության ջատագովները սկսեցին մեկնաբանել, թե Եվրոմիությունը վախենում է կամ առնվազն վտանգված է համարում նոյեմբերի վերջին Հայաստանի հետ Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումը, դրա համար էլ արագացնում է որոշ գործընթացներ:

Ամենից առաջ, այսօրինակ մեկնաբանությունները ոչ միայն ակնհայտորեն իրարանցում ու անհասկանալի վիճակ ստեղծելուն են միտված, այլեւ, մեղմ ասած, կիսագրագետ են: Եվ այսպիսի բնորոշում տալու համար գոնե երկու պատճառ կարելի է նշել:

Նախ, ինչպես եվրոպական, այնպես էլ հայաստանյան կողմը քանիցս հայտարարում էին, թե հենց այս համաձայնագրի բանակցությունների առումով Հայաստանը բավականին առաջընթաց էր գրանցել դեռ ամիսներ առաջ՝ համաձայնեցնելով առկա տարբեր ոլորտային գլուխների զգալի մասը, ուստի ակնկալելի էր, որ մի օր, ամեն դեպքում, մինչեւ նոյեմբերին Վիլնյուսում սպասվող նախաստորագրումը, այս փաստաթղթի շուրջը բանակցությունները կավարտվեն:

Երկրորդ հանգամանքն այն է, որ գրեթե նույն իրավիճակում են Արեւելյան գործընկերության երկրներից եւս երկուսը՝ Վրաստանը եւ Մոլդովան, ասել է թե պետք է սպասել, որ սրանց կողմից էլ Ասոցացման համաձայնագրերի նախաստորագրմանը պիտի նախորդի ԽՀԱԱԳ համաձայնագրի բանակցությունների ավարտը, ընդ որում, Հայաստան-Վրաստան-Մոլդովա հարթակի դեպքում արդեն դժվար է միանշանակ պնդել, թե Եվրոմիությունը շտապում է ու բանակցությունները ժամանակից շուտ ավարտում:

Տես էջ 3

ԱԶԳ

# Ընթացիկ

## Զենքը պահանջում է սառնասրտություն

Եվ ոչ մի էմոցիա: Հասկանալի է, Ադրբեջանը անընդհատ զինվում է, ինչը բնականաբար մեզ անհանգստացնում է: Հասկանալի է, որ բոլորը համերաշխ լռում են, երբ Ադրբեջանը զինվում է, իսկ խոսողներն էլ պարտադիր գուժում են, որ «Ադրբեջանը պատրաստվում է երկրորդ ղարաբաղյան պատերազմին», հասկանալի է, որ նման կարծիքներ հնչում են հիմնականում Արեւմուտքից, իսկ զենք Ադրբեջանը հիմնականում գնում է Ռուսաստանից:

Այսինքն, ռուսական զենքով զինվող Ադրբեջանին Արեւմուտքը ոչ միայն չի քննադատում, այլեւ փորձում է օգտագործել ռուս-ադրբեջանական զինական գործարքը՝ Հայաստանին Ռուսաստանից վերջնականապես կտրելու համար:



Հենց այդ պատճառով էլ հիմնականում Արեւմուտքից մենք լսում ենք, որ եթե Մոսկվան Բաքվին զենք է վաճառում, ուրեմն Բաքուն պատրաստվում է հարձակվել Ղարաբաղի վրա:

Այո, ադրբեջանական բանակը վերջերս գնեց «դաշտային հոսպիտալներ», ինչը անմիջականորեն ցույց է տալիս, որ Բաքուն պատերազմի է պատրաստվում, բայց, նախ, «դաշտային հոսպիտալները» կարող են ծառայել նաեւ քաղաքացիական բնակչությանը: Եվ հաշվի առնելով, որ ադրբեջանական շրջաններում քաղաքացիական հիվանդանոցներ շատ չկան, հետեւաբար «դաշտային հոսպիտալները» առավելապես հենց քաղաքացիական բնակչությանն են ծառայելու: Պարզապես ինչո՞ւ ավելորդ ծախս անել եւ քաղաքացիական հիվանդանոցներ կառուցել Բաքվից հեռու, միեւնույն ժամանակ, ինչո՞ւ հերթական անգամ պատերազմի նախապատրաստվողի կեցվածք չընդունել:

Իրականում ոչինչ միանշանակ չէ: Հասկանալի է, որ զենք կուտակելով Ադրբեջանը պատերազմի է պատրաստվում, գոնե սպառնում է պատերազմով, խնդիրն այն է, թե ո՞ւմ դեմ եւ ո՞ւմ: Գաղտնիք չէ, որ ՆԱՏՕ-ն լրջորեն հետաքրքրված է Ադրբեջանի տարածքներով, մասնավորաբար՝ Իրանի դեմ հավանական գործողություններ ձեռնարկելու նպատակով: Մյուս կողմից, Բաքուն պաշտոնապես չի հերքում, որ մոտ ժամանակներս հնարավոր է ռազմական բախում Թուրքմենստանի հետ՝ կապված Կասպից ծովի նավթային ռեսուրսների հետ (հիշենք, որ ադրբեջանական բանակը համալրվում է նաեւ արդիական ռազմական նավերով, իսկ վերջիններս հաստատապես ղարաբաղյան պատերազմի համար չեն նախատեսված): Այսինքն, կուտակվող սպառազինությունը, «դաշտային հոսպիտալները», արդիականացող (եթե արդիականանում է, իհարկե) ողջ ռազմական համակարգը Ադրբեջանին անհրաժեշտ է ամեն պարագայում, եւ ամենեւին ոչ միայն Հայաստանի դեմ նոր հավանական պատերազմում: Գուցե Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելը առհասարակ վերջի՞ն հերթին է դիտարկվում Բաքվի ռազմական պլաններում...

Հենց սրանով էլ հիմնավորվում է Արեւմուտքի լռությունը՝ ադրբեջանական բանակի տարեցտարի աճող սպառազինության հետ կապված: Բանն այն է, որ անգամ ռուսական զենքով Բաքուն կարող է օգտակար լինել ՆԱՏՕ-ին, եթե Իրանի դեմ ի վերջո որոշվի ձեռնարկել հենց ռազմական գործողություններ, ինչը, նկատենք, նաեւ Ադրբեջանին է ձեռնտու, հաշվի առնելով «ադրբեջանցիներով բնակեցված հարավային Ադրբեջանի վերջնական միացումը մայր Ադրբեջանին»: Այս վերջին համատեքստում են դիտարկելի նաեւ թուրք-ադրբեջանական զորավարժությունները Նախիջեւանում: Հայաստանում դրանց վերաբերվում են որպես Հայաստանի դեմ ռազմական գործողությունների պատրաստվող զույգ թուրքական պետությունների բացահայտ սպառնալիքի, այնինչ կոնկրետ Նախիջեւանում, շատ հարմար է թուրք (ՆԱՏՕ-ական) եւ ադրբեջանական զորախմբավորումների համար համատեղ նախապատրաստվել սահմանակից Իրանի շուրջը հնարավոր զարգացումներին:

Ինչ վերաբերում է ռուսական զենքին՝ Ադրբեջանում: Այս կապակցությամբ արդեն առիթներ ունեցել ենք խոսելու, սակայն Հայաստանում շարունակվում են խոսակցությունները, որ Մոսկվան Բաքվին զենք է վաճառել, քանի որ այդ կերպ «պատժել է Երեւանին»: Հարց է առաջանում, ինչի՞ համար, գուցե՝ 49 տարով Գյումրում տեղակայված եւ անվճար հիմքունքերով գործող ռուսական բազայի՞: Կամ այդ պարագայում, ինչո՞ւ Մոսկվան չպատժեց Ադրբեջանին, քանի որ վերջինս փաստորեն, մերժեց ռուսներին երկարաձգել Գաբալայի կայանի վարձակալման ժամկետը:

Իրականում, ռուս-ադրբեջանական այս վերջին՝ 1 մլրդ դոլարի համաձայնագրի պայմանավորվածություններ ձեռք են բերվել դեռեւս մի քանի տարի առաջ, ըստ որում այս խմբաքանակը, որ մտել է Ադրբեջան, հիշյալ համաձայնագրի մի մասն է ընդամենը. ռուսական զենք, ըստ համաձայնագրի, դեռ մտնելու է Ադրբեջան: Ուշագրավ է, որ ռուս փորձագետ Իգոր Դմիտրեւը ադրբեջանական Vesti.az-ին հայտնել է. «Այս տարվա ապրիլին ռուս-ադրբեջանական պայմանագիրը սառեցվեց, խոսակցություններ կային անգամ դրանից հրաժարվելու մասին»: Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլին ռուս-ադրբեջանական հարաբերությունները փայլուն չէին, մասնավորաբար խոսակցություններ կային, որ ռուսները «չեն մարսելու» Գաբալայի հարցով Բաքվի մերժումը, երկու երկրներն ունեին լուրջ տնտեսական անհամաձայնություններ: Հետեւաբար, քանի որ համաձայնագրով նախատեսված զենքի մի մասն այդուհանդերձ մտավ Ադրբեջան, նշանակում է, որ Մոսկվան ու Բաքուն հաղթահարել են իրենց միջեւ եղած լարվածությունը, հետեւաբար այս պայմանագիրը Մոսկվայի ու Բաքվի երկկողմ հարաբերությունների տվյալ մակարդակի արդյունքն է, ոչ թե, ինչպես Հայաստանում է ներկայացվում, «Հայաստանին պատժելու միջոց»:

Մյուս կողմից, եթե անգամ ռուս-ադրբեջանական հիշյալ պայմանագիրը գործում է, ու ռուսական զենքը մտնում է Ադրբեջան, դա չի նշանակում, որ Բաքվի ու Մոսկվայի միջեւ այսօր ամենեւին լարվածություն չկա, պարզապես դրանք այնքան չեն, որ խանգարեն երկկողմ համագործակցությանը տվյալ ոլորտում: Ավելին՝ Ադրբեջանում շատ վերլուծաբաններ երկրում ի հայտ եկած «Ժողովրդավարական ուժերի ազգային խորհրդի» մեջ տեսնում են «ռուսական հետք»: Գուցե Մոսկվան «անձամբ» չի ձեւավորել Ադրբեջանի «Ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդը» (ԺՈՒԱԽ), բայց փաստ է, որ դրա մեջ եւ ստեղծման ակունքներում են Ռուսաստանի ադրբեջանական համայնքի ներկայացուցիչները: ԺՈՒԱԽ-ն առավել ակտիվ գործունեություն էր ծավալում Ադրբեջանում հենց ռուս-ադրբեջանական ոչ բարվոք հարաբերությունների համատեքստում, եւ երբ Բաքուն ու Մոսկվան փոխադարձ համաձայնության եկան՝ վերականգնելու ռուս-ադրբեջանական զենքի վաճառքի վերաբերյալ վերոհիշյալ համաձայնագիրը, «ժողովրդավարները» պասիվացան, իսկ նրանց միասնական թեկնածու Իբրահիմբեկովը «կձերբակալվի, երբ ժամանի Ադրբեջան»: Այսինքն, հնարավոր է, որ Ադրբեջանն ամենեւին էլ շահագրգռված չի եղել Ռուսաստանից ձեռք բերելու 1 մլրդ դոլարի զենք, համենայն դեպս ավելի շատ, քան Ռուսաստանը, որն էլ հնարավոր միջոցներով ճնշել է նախընտրական Ադրբեջանին՝ վերականգնել պայմանագրային պարտավորությունները: Սա նշանակում է, որ Մոսկվային պետք է զենք ունենալ Ադրբեջանում, ինչը նրան հնարավորություն է տալիս ոչ թե «հայերին պատժել» (հայերին Մոսկվան նաեւ Հայաստանում կարող է պատժել կամ հենց Մոսկվայի փողոցներում), այլ որոշակիորեն պահպանել ուժերի հավասարակշռությունը, ոչ թե Հայաստանի ու Ադրբեջանի, այլ Ադրբեջանում՝ իր ու ՆԱՏՕ-ի:

Ուրեմն զենքը պահանջում է սառնասրտություն, ինչն ամենեւին էլ զգոնության կորուստ չի նշանակում:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ՎԱՇԻՆԳՏՈՆ

## Նոր փաստաթուղթ Ադրբեջանի մասին

**Ամերիկայի հայկական համագումարը շուրջ 125 կոնգրեսականների նոր փաստաթուղթ ներկայացրեց Ադրբեջանի մասին: Եվ մինչ Կոնգրեսն այս շաբաթ պատրաստվում է հավանություն տալ Միացյալ Նահանգների արտաքին օգնության առաջնահերթություններին, Ամերիկայի հայկական համագումարն այցելել է շուրջ 125 կոնգրեսականների եւ առձեռն հանձնել համագումարի 2013 թվականի նոր մամլո հաղորդագրությունների փաթեթը, որը շեշտադրում էր ֆինանսավորման առաջնահերթությունները Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի համար, ներառյալ Ադրբեջանի մասին Համագումարի նոր փաստաթուղթը: Իսկ այս տարվա սկզբին զեկույցները երեւան հանեցին այն, որ Ադրբեջանը կրկին շուրջ 200 անգամ խախտել է զինադադարը: Իսկ այս միջսահմանային հարձակումների մթնոլորտում հայտարարվեց, որ Ադրբեջանը Ռուսաստանից սկսել է ստանալ մեկ միլիարդ դոլար արժողությամբ նոր զինամթերք եւ սպառազինություն: Այդ պատճառով ճիշտ ժամանակին էր, որ մի քանի օր անց Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության հանձնաժողովը «Վրդովված գործընկեր. Ադրբեջանի աճող ավտորիտարիզմը» անվամբ լսումներ անցկացրեց: Ամերիկայի հայկական համագումարի փոխանցմամբ՝ լսումների ընթացքում Համագումարը հանդես է եկել կարեւոր խոսքով, որում մատնանշվում էին Ադրբեջանի ավտորիտար վարչակարգի բազմաթիվ օրինակներ՝ հիմնարար ազատությունների խախտումը, լրագրողների նկատմամբ իրականացվող հարձակումները, Ջուղայի հայկական հնադարյան գերեզմանոցի ոչնչացումը, Լեռնային Ղարաբաղի բանակցային գործընթացների շուրջն անհամերաշխությունը, միջամտությունը հայ-թուրքական հաշտեցման գործընթացներին, հսկայական ռազմական ծախսերը, որոնք 2011-2012 ֆինանսական տարում կազմել են շուրջ 6 միլիարդ դոլար եւ այլն: Իսկ Համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին հայտարարել է. «Համագումարը խորապես մտահոգված է Ադրբեջանի անհամերաշխությամբ եւ շարունակական սպառնալիքներով Ամերիկայի դաշնակից Հայաստանի դեմ»:**

Ի. Պ.

## Սակագինն առայժմ մնում է ...

*1-ին էջից*

**«Անկեղծ ասած, ես մինչ այս ամռան սկիզբ վստահ եմ եղել, որ դեռ մի քանի տարի էլ կկարողանանք այս ռեժիմով առաջ գնալ, ու վարձավճարները չեն բարձրանա», խոստովանել է ուղերձում քաղաքապետը՝ միաժամանակ ընդգծելով, որ ոլորտի հետ անմիջական կապ ունեցող շուկաներում վերջին թանկացումները, ցավոք, զրկել են անգամ կոսմետիկ ուղղումներով առաջ գնալու բոլոր հնարավորություններից. «Խնդրահարույց որոշման կայացումն ու արագ քայլերով առաջ գնալն այլեւս անխուսափելի էին», բացատրել է նա: Մարդկանց անվտանգ ու արժանապատիվ փոխադրումների կազմակերպման, տրանսպորտային համալիրը կործանման եզր չհասցնելու, եւ միաժամանակ՝ սոցիալական ներկա իրավիճակում մեր քաղաքացիների համար ծախսեր ավելացնելու, երեւանցիների համար նոր հոգս չստեղծելու մտահոգություններով դժվարությամբ կայացված որոշում էր 150 դրամ ուղեվարձ սահմանելու որոշումը, որը սկսած մեծ գործընթացի միայն սկիզբը ու համակարգին ներկայացված խնդիրները լուծելու գինը՝ 150 դրամն ուղեվարձն է համարել քաղաքապետը: Տեղեկացնելով, որ արդեն հանձնարարել է ստեղծել մասնագետներից եւ շահագրգիռ անձանցից կազմված հանձնաժողով, որը մի քանի ամիսների ընթացքում կմշակի բոլոր այն մեխանիզմները, որոնք թույլ կտան ամբողջական դարձնել «Երեւան քաղաքի ներքաղաքային ուղեւորափոխադրումների վարձը վերանայելու մասին» որոշումը, Տ. Մարգարյանը հայտարարել է. «Իսկ մինչ այդ այս որոշման գործողությունը իմ կողմից կկասեցվի»:**

**Քաղաքապետը միաժամանակ նշել է. «Մենք ուշադիր հետեւում ենք նաեւ այս օրերին մայրաքաղաքի կանգառներում մեր երիտասարդների կողմից կազմակերպվող ակցիաներին ու հնչեցվող կոչերին: Ինձ ուրախացնում է այն ջերմությունը, որն այսօր կրկին կա երեւանցիների միջեւ միմյանց օգնելու, իրար հանդեպ ավելի հոգատար լինելու առումով: Այս ջերմությունը արժեք է, որ պետք է կարողանանք պահել մեծ ու մնայուն գործեր անելու համար: Միեւնույն ժամանակ ափսոսում եմ երբեմն-երբեմն նկատվող տգեղ վերաբերմունքից մեր վարորդների հանդեպ. իրականում ծանրագույն աշխատանք կատարող ու ոչ համապատասխան վարձատրություն ստացող այդ մարդիկ մեծագույն հարգանքի են արժանի: Չկա մենք-դուք: Կա հինավուրց մայրաքաղաքը ու կանք մենք՝ բոլորս: Ու միասին մենք արժանին ենք հատուցելու Երեւանին: Անպայման: Շնորհակալություն»**

**Դե, ինչպես ասում են՝ շաբաթը ուրբաթից շուտ եկավ: Ու հավանաբար այսպիսի ուղերձի համար դեր խաղացին եւ առավոտյան կառավարության նիստում վարչապետի հանձնարականները՝ համապատասխան կառույցների հետ քննարկելու ուղեվարձի խնդիրը, եւ սակագնի դեմ հասարակական բողոքի ալիքի երեկվա թեժացումը, եւ, ինչու չէ, միգուցե ավելի վերից, միգուցե երկրի ղեկավարից հնչած զանգերը (այդ մասին ստույգ չգիտենք): Բոլոր դեպքերում՝ հանրային կարծիքը կարող է ժամանակավորապես տոնել իր հաղթանակը:**

**Ավելացնենք, որ քաղաքապետը երեկ, այս ուղերձից առաջ հանդիպելով Երեւանի ավագանու ԲՀԿ խմբակցության հետ, իր տեսակետներն էր ներկայացրել, որից հետո խմբակցութունն իր հայտարարությամբ տրանսպորտի սակագնի բարձրացումը անընդունելի էր համարել, իսկ հարցի լուծման համար հանձնաժողով ստեղծելու գաղափարը՝ անարդյունավետ, եթե նախկին սակագնին չվերադառնանք: Ուրեմն՝ հիմա ԲՀԿ-ի համար էլ ընդունելի է հանձնաժողով ստեղծելու գաղափարը:**

**Երեկ երեկոյան, ի դեպ, տրանսպորտի թանկացման դեմ պայքարող երիտասարդությունը Երեւանի փողոցներում եւ Ազատության հրապարակում նշում էր իր հաղթանակը՝ համապատասխան տոնայնությամբ կարգախոսներով:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841, 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

# 100.000 ԱՄՆ դոլար «Գրանդ հոլդինգի» կողմից «Նոր Հալեպ» թաղամասի կառուցման համար

*Աշտարակում կկառուցվի 5-10 շենք եւ 100 առանձնատուն սիրիահայերի համար*

Սիրիայի «քաղաքացիական» պատերազմի հետեւանքով, Հայաստան տեղափոխված սիրիահայերի համար շուտով Աշտարակ քաղաքում կկառուցվի «Նոր Հալեպ» թաղամասը:

Սփյուռքի նախարարի առաջարկով մշակվել է «Սիրիահայերի համար բնակելի թաղամաս կառուցելու» ծրագիրը եւ նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարականի համաձայն, արդեն մեկնարկել է բնակարանաշինության «Նոր Հալեպ» ծրագրի իրականացումը. 2013թ. հունիսի 6-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Աշտարակ քաղաքում «Նոր Հալեպ» թաղամասի կառուցմանն աջակցելու մասին» որոշումը:



Սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** երեկ լրագրողների հետ հանդիպմանը ներկայացրեց թաղամասի հետ կապված բոլոր մանրամասները. «Կան արդեն իրավական բոլոր հիմքերը՝ թաղամասը կառուցելու համար: Ըստ Աշտարակի ավագանու որոշման՝ 4,8 հա հողատարածք անվճար կտրամադրվի բնակարանաշինության համար, այժմ 300 սիրիահայ հերթագրվել է՝ բնակարան ստանալու համար»:

Սփյուռքի նախարարը տեղեկացրեց, որ 5-10 երկու մուտքով շենք կկառուցվի, ինչպես նաեւ մինչեւ 100 առանձնատուն. «Սիրիահայերը, ուսումնասիրելով տարածքները, նախընտրեցին Աշտարակը: Սակայն այս ծրագիրն Աշտարակով չի ավարտվելու, այլ շարունակական բնույթ է կրելու: Սիրիայում վիճակն օր օրի վատթարանում է, եւ մեր հայրենակիցները նույնիսկ Սիրիայից են ցանկություն հայտնում հերթագրվել՝ բնակարան ստանալու համար: Այժմ Բեյրութից Երեւան ավելի շատ սիրիահայ է գալիս, քան բեյրութահայ: Մենք պետք է ստեղծենք բոլոր պայմանները նրանց համար, ամենակարեւորը՝ աշխատանք եւ բնակարան»:

Ի դեպ, մեր հայրենակիցները մեծ ներդրումներ են ունենում այս ծրագիրը կյանքի կոչելու համար, մասնավորապես՝ «Գրանդ հոլդինգը», ի դեմս Վարդանյան ընտանիքի: Նրանց կողմից նվիրաբերվել է 100.000 ԱՄՆ դոլար:

Սա առաջին դեպքը չէ, որ «Գրանդ հոլդինգը» հանդես է գալիս բարեգործությամբ: Տարբեր բնագավառներում՝ ինչպես կրթության, գիտության, մշակութային, այնպես էլ տնտեսական, սոցիալական եւ այլ ոլորտներում Վարդանյանների ընտանիքը ներդնում է անհրաժեշտ բոլոր միջոցները:

Հուսանք, որ ինչպես «Գրանդ հոլդինգը», այնպես էլ մյուս կազմակերպությունները, մեծահարուստները կմիանան այս նախաձեռնությանը եւ կաջակցեն սփյուռքահայերին: Սա իսկապես հիանալի օրինակ է, որ մարդիկ մտածում են ոչ միայն իրենց, այլեւ մյուսների մասին, եւ ձեռք են մեկնում:

Ինչպես հայտնեց սփյուռքի նախարարը, Կարեն եւ Սամվել Կարապետյանները եւս պատրաստակամություն են հայտնել մասնակից դառնալու այս ծրագրին, սակայն թե որքան գումար կտրամադրեն, դեռ հստակեցված չէ: Ընդգծենք նաեւ, որ Կարապետյանների ընտանիքը եւս միշտ կանգնած է հանրության անապահով շերտի կողքին, ինչպես նաեւ ֆինանսական առումով խթանում է գիտնականներին:

Հրանուշ Հակոբյանը դիմեց նաեւ Հայաստանում ապրող յուրաքանչյուր հայի, բիզնեսմենի, պետական եւ քաղաքական գործչի, պաշտոնյաների, որպեսզի յուրաքանչյուրը իր ներդրումն անի, որպեսզի լիարժեք բոլոր ծրագրերը ի կատար ածվեն:

Նախարարը շնորհակալություն հայտնեց նաեւ այն 36 նկարիչներին, որոնք նվիրաբերեցին իրենց նկարները՝ վաճառքից ստացված գումարի հասույթը փոխանցելով սիրիահայերին:

ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ **Ալեքսան Կարապետյանը** հավաստիացրեց, որ քաղաքաշինության նախարարությունն ամեն ինչ կանի, որ սեյսմակայունությունը ապահովված լինի, եւ ստեղծված լինեն բոլոր հարմարավետ պայմանները «Նոր Հալեպ» թաղամասում: Ալեքսան Կարապետյանը պատրաստակամություն հայտնեց նաեւ բոլոր հարցերին լուծում տալու:

Իսկ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Լենա Հալաջյանն** ընդգծեց, որ նման նախաձեռնությունների շնորհիվ սիրիահայերը չեն հեռանա իրենց հայրենիքից:

«Սիրիահայերի կենտրոնում» են կուտակվում բոլոր գումարները, սիրիահայերի բոլոր կարիքները այստեղ են լուծվում, ինչպես նաեւ հումանիտար բոլոր օգնություններն այդ կենտրոնում են կատարվում:

Բնակարանների գումարի մի մասը վճարելու են սիրիահայերը:

Եթե ցանկանում եք աջակցել սիրիահայերին, ապա կարող եք կապ հաստատել «Սիրիահայերի կենտրոնի» հետ 077 83 59 39 հեռախոսահամարով:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

---

**ԿԻ՞ՆԸ, ԹԵ՞ ԱՄՈՒՍԻՆԸ**

# Պուտինը մեկնում է Ադրբեջան՝ նախագահի թեկնածու «առաջադրելու»...

*1-ին էջից*

Սոյուն Սադիկովի հոդվածը, մինչդեռ, հետաքրքրական է հատկապես նրանով, որ ռուսաստանյան մամուլում տպագրվել է Պուտինի Ադրբեջան կատարելիք այցի մասին կիսապաշտոնական տեղեկատվության տարածմանը գրեթե զուգահեռ: Փաստացի դրանց միջեւ դժվար է որոշակի առնչություն մատնանշել: Բայց չէ՞ որ հենց այնպես ոչինչ չի լինում: Մանավանդ որ, ինչպես ադրբեջանական փորձագետներն են ասում, Սոյուն Սադիկովը «Պուտինի մոտ մուտք ունեցող անձնավորություն է»:

Հնարավո՞ր է, որ Բաքվում Ալիեւ-Պուտին հանդիպմանը քննարկվի նաեւ մեկ ժամկետով իշխանությունը Մեհրիբան Ալիեւային փոխանցելու հարցը: Պուտինը նման փորձ ունի, որքան էլ համեմատությունը տեղին չթվա. նա մեկ անգամ «գահը» զիջել է Դմիտրի Մեդվեդեւին՝ մնալով, սակայն, ՌԴ փաստացի ղեկավար: Եվ ինչո՞ւ բացառել, որ Ռուսաստանի նախագահը կարող է Իլհամ Ալիեւին «եղբայրաբար հորդորել», որ թեկնածությունը չառաջադրի եւ առաջնաբեմ մղի տիկնոջը:

Ի՞նչ շահ կունենա այս հարցում Կրեմլը՝ դժվար է փաստերով հիմնավորել: Նշենք միայն, որ Մեհրիբանի քույրը՝ Նարգիզ Փաշաեւան, ռուսաստանյան ընկերությունների հետ սերտ բիզնես կապեր ունի, միաժամանակ գլխավորում է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Բաքվի մասնաճյուղը:

Ամեն ինչ, իհարկե, ենթադրությունների ոլորտից է: Ստույգ է այն, որ գրեթե մեկ ամիս Մեհրիբան Ալիեւան Ադրբեջանից բացակայում է: Ավելի վաղ մենք գրել էինք, որ դա «կարծես աքսոր է», նրան հեռացրել են, որպեսզի նախագահի թեկնածու առաջադրվելու խոսակցություններն աստիճանաբար մարեն: Այնուամենայնիվ, ընդգծենք նաեւ, որ, չնայած իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության հավաստիացումներին, որ նա «պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը», անձամբ Մեհրիբան Ալիեւան առ այս պահը պաշտոնապես չի հայտարարել, թե մտադիր չէ առաջադրվել Ադրբեջանի նախագահի թեկնածու: Իսկ, ինչպես ասում են, «սատանան մանրուքների մեջ է»:

---

# Հայաստանին միշտ պետք է մեկը ճնշի՞

*1-ին էջից*

**Ասվածի վկայությունն է նաեւ այն տեղեկությունը, որ երեկ էլ Եվրոմիության ու Վրաստանի միջեւ են ավարտվել նույն ԽՀԱԱԳ համաձայնագրի բանակցությունները: Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ ԵՄ արտաքին քաղաքականության ղեկավար Քեթրին Էշթոնն ու Հարեւանության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հուլիսի 24-ին հայտարարել են ոչ միայն ԽՀԱԱԳ, այլեւ ընդհանրապես Ասոցացման համաձայնագրի բանակցությունների ավարտի մասին: Մոլդովան էլ Վրաստանից առաջ արդեն իսկ այդ հարցը փակել է, ու տրամաբանական է, որ ինչ-որ պահի բանակցությունների ավարտ կազդարարվի նաեւ Հայաստանի առումով:**

**Հայաստանը հնարավոր է, որ արդեն 2014-ին ստորագրի ԵՄ հետ խոր եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման համաձայնագիրը: Այս մասին էլ օրերս հայտարարեց Լիտվայի արտաքին գործերի նախարար Լինաս Լինկեվիչիուսը Բրյուսելում, իր խոսքերը հասցեագրելով ոչ միայն Հայաստանին, այլեւ Վրաստանին եւ Մոլդովային:**

**Մինչ այդ էլ հուլիսի 22-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Բրյուսելում մասնակցեց Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերության արտգործնախարարների հանդիպմանը, որին ներկա էին ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը, ԵՄ ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն: Հանդիպման մասնակիցները քննարկել էին նոյեմբերին Վիլնյուսում կայանալիք Արեւելյան գործընկերության երրորդ գագաթնաժողովի նախապատրաստական աշխատանքները:**

**Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, թե եվրոպական կողմում Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների ֆոնին ինչ-որ անհանգստություն կա, այլապես պատահական զուգադիպություն պետք է համարել եվրոչինովնիկների հաճախակիացած այցերը Հայաստան: Բայց դատողությունները, թե Ասոցացման համաձայնագրի նախաստորագրումը ապտակ է կամ էլ չգիտեմ ինչ՝ ուղղված Ռուսաստանին, առնվազն ոչ արժանապատիվ կեցվածք է, քանի որ մեր ռազմավարական դաշնակցից մանր-մունր, բայց ապտակներ քանիցս ենք ստացել՝ գազային հարցերից մինչեւ տարածաշրջանային դիրքորոշումներ:**

**Մյուս կողմից, եվրոպական կողմի որոշակի անհանգստությունը կարելի է նաեւ պատճառաբանել այն ողջ աժիոտաժով, որ որոշ քաղաքական ուժեր ու հատկապես անհատներ փորձում են ստեղծել Վիլնյուսյան գագաթնաժողովին ընդառաջ: Այսինքն՝ ստացվում է, որ ինքներս ենք ջուրը պղտորում, եվրոչինովնիկներին խնդրում ենք մեկնաբանել այնպիսի հարցեր, որոնք ինքնին պղտորող են, այդպիսով ջուր լցնելով Հայաստանի եվրոպական ինտեգրմանը ոչ բարի աչքով նայողներին: Ինքներս ենք իրավիճակը հասցնում այնտեղ, որ, օրինակ, Բրյուսելում «Ազատություն» ռադիոկայանի հետ զրույցում Եվրոմիության հարեւանության ու ընդլայնման հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն հայտարարում է, թե Եվրոմիության կողմից Հայաստանի վրա ճնշումներ չկան, թե Հայաստանը ազատ է կատարելու ինքնակամ որոշում:**

**«Ես վերջերս Հայաստանում էի եւ չհանդիպեցի մեկին, ով կասեր, թե մենք ճնշում ենք մեր գործընկերներին՝ ընտրություն կատարել Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպման ժամանակ ես նշեցի, որ Արեւելյան գործընկերության ծրագիրը իր Ասոցացման համաձայնագրով նպատակ ունի ամրապնդել մեր գործընկերների հնարավորությունները եւ դիրքերը տարածաշրջանում, ինչպես նաեւ խրախուսել հարեւան երկրների հետ իրենց ավանդական հարաբերությունները», ասել է Ֆյուլեն:**

**Այնպիսի տպավորություն է ստացվում, կարծես Հայաստանին պարտադիր ու միշտ ինչ-որ մեկը պիտի ճնշի, այլապես մենք մեզ մի քիչ լավ չենք զգում: Այսպիսի հոգեբանությամբ առաջնորդվողների դատողություններում դերակատարություն ունի նաեւ անտեղյակությունը, քանի որ հղումները հայտարարություններին, թե Հայաստանը Վիլնյուսի հանդիպումից էլ ավելի շուտ կարող է ստորագրել Ասոցացման համաձայնագիրը, ուղղակի կրկին անգրագիտության դրսեւորում են:**

**Եվրոմիությունը, մեծագույն ցանկության ու շտապողականության, Հայաստանի՝ Ռուսաստանի գրկում առհավետ հանգրվանելու «վտանգը սրտում» անգամ չի կարող որեւէ կերպ այնպիսի գործընթացներ կազմակերպել, որոնց միջոցով Հայաստանը Ասոցացման համաձայնագիր ստորագրի մինչեւ նոյեմբերի վերջ: Հիշեցնենք, որ նոյեմբերի վերջին ասոցացման համաձայնագրի նախաստորագրմանը դեռ հաջորդելու է իրավաբանների ու լեզվաբանների կողմից փաստաթուղթը իրավական դարձնելու գործընթացը, ապա նաեւ վավերացման հարց կառաջանա ոչ միայն Հայաստանի խորհրդարանում, այլեւ ԵՄ անդամ բոլոր երկրների:**

**Այսինքն՝ Ասոցացման գործընթացում արագացում որեւէ կերպ չի նկատվում, ու որքան էլ որոշ ռուս քաղաքագետներ, հայտնի ու անհայտ պատճառներով լուրեր տարածեն, թե Հայաստանը չի նախաստորագրելու Ասոցացման համաձայնագիրը, դա երբեք չի կարող նշանակել, թե Հայաստանը հենց այդպես էլ կվարվի: Իսկ որ Ասոցացման համաձայնագրի տեքստը մարդիկ դեռ չեն տեսել, դա եւս չի նշանակում, թե չեն տեսնելու. համաձայնագիրը հանրային կդառնա, երբ սկսվեն դրա քննարկումները խորհրդարանում, ու եթե պարզվի, որ Եվրոմիությունը այդ փաստաթղթում «լուծել է» ղարաբաղյան հարցը, կամ էլ ՀԱՊԿ-ից հանել Հայաստանն ու ՆԱՏՕ ուղարկել, մեր խորհրդարանականները միշտ էլ կարող են ուղղակի չվավերացնել այդ համաձայնագիրը՝ թույլ չտալով մտնել ուժի մեջ:**

# Առաջին աշխարհամարտը

## *Չմոռանա՛լ Հայոց ցեղասպանության պատմության տրամաբանությունը*

Լրանում է Առաջին համաշխարհային պատերազմի սկսման 99-ամյակը: Աշխարհը ցնցած եւ համաշխարային քաղաքական համակարգի վրա աննախադեպ ազդեցություն ունեցած այդ պատերազմի մասին շատ է գրվել, շատ է խոսվել, նկարահանվել են ֆիլմեր, կանգնեցվել են բազում հուշարձաններ: 1914 թ. օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային: Օգոստոսի 4-ին Առաջին աշխարհամարտի եվրոպական թատերաբեմերում սկսվեցին ռազմական գործողություններ, որոնք արագորեն տարածվեցին այն ժամանակվա մի քանի խոշոր մետրոպոլիաների գաղութներում, աշխարհի տարբեր մասերում: Իմպերիալիստական եւ անարդարացի կոչված այդ պատերազմին միմյանց դեմ էին կռվում մի կողմից Անտանտի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան), մյուս կողմից՝ Եռյակ դաշինքի (Ավստրո-Հունգարիա, Օսմանյան Թուրքիա, սկզբում նաեւ Իտալիա) բանակները: Առաջին աշխարհամարտի առաջացրած քաղաքական ցնցման եւ դրա տրամաբանական շարունակությունների արդյունքը եղավ այն, որ այդ պատերազմի վերջում կործանվեցին միապետական կարգերը Ռուսաստանում, Գերմանիայում, Ավստրո-Հունգարիայում եւ Օսմանյան կայսրությունում: Եվրոպայում ձեւավորվեց բոլորովին նոր քաղաքական քարտեզ, իսկ աշխարհը բաժանվեց երկու բեւեռների՝ կոմունիստական եւ այսպես կոչված կապիտալիստական: Առաջին աշխարհամարտի ռազմաճակատներում կռվում էին միլիոնավոր մարդիկ, առաջին անգամ կիրառվեց քիմիական զենք, զոհվեց ավելի քան տասը միլիոն մարդ: Սակայն ամենամեծ ողբերգությունը ապրեց հայ ժողովուրդը, ավելի կոնկրետ՝ արեւմտահայությունը, որը Օսմանյան կայսրությունում ենթարկվեց ցեղասպանության եւ դադարեց գոյություն ունենալ իր պատմական հայրենիքում՝ Արեւմտյան Հայաստանում, որն այդ ժամանակվա միջազգային հարաբերությունների փաստաթղթերում անվանվում էր Թուրքահայաստան: 20-րդ դարում աննախադեպ այդ ոճրագործությունը Առաջին համաշխարհային պատերազմի վերջում հաղթած պետությունների միջամտությամբ դատապարտվեց միայն մասամբ, երկչոտ եւ քաղաքական առուծախի առարկա դառնալով: Փորձենք վեր հանել Առաջին համաշխարհային պատերազմի հետ կապված այն խնդիրները, որոնք իմաստ ունի մեր իրականության մեջ կրկին քննարկել ու վերհանել, ընդառաջ գնալով Առաջին աշխարհամարտի հարյուրամյակին եւ դրանով ներդաշնակ դարձնել մեր պատմական արդարության ակնկալիքը միջազգային հանրության խնդիրներին:

### Թե ինչպես դադարեց գոյություն ունենալ Արեւմտյան Հայաստան կամ Թուրքահայաստան քաղաքական-աշխարհագրական եզրը

1912-1913 թթ. ընթացքում, լարված միջազգային հարաբերությունների եւ մեծ տերությունների միջեւ անընդհատ սրվող հակասությունների պայմաններում, Ռուսաստանի նախաձեռնությամբ, քննարկվում էր Արեւմտյան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու եւ ինքնավարություն շնորհելու հարցը: Այդ քննարկումների արդյունքում, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, կարծես որոշվել էր հայաբնակ նահանգներին խիստ սահմանափակ կամ, ինչպես այժմ է ընդունված անվանել, մշակութային ինքնավարություն շնորհելու հարցը: Սակայն մեծ տերությունների նախաձեռնությամբ հայաբնակ երկու նահանգներում կառավարիչներ նշանակված եվրոպացիներ Հոֆը եւ Վեստենեկը, պատերազմի սկսման պատճառով Թուրքահայաստան այդպես էլ չհասան: Հայաբնակ նահանգների, եւ ոչ միայն Արեւմտահայաստանի, այլեւ ու Կիլիկիայի անջատումը կամ Ռուսաստանի եւ նրա դաշնակիցների կողմն անցնելը թույլ չտալու համար, Օսմանյան կայսրության այն ժամանակվա կառավարիչները՝ երիտթուրքերը, նախաձեռնեցին եւ բացառիկ դաժանությամբ իրականացրին արեւմտահայության տեղահանությունն ու ոչնչացումը: Այս գործողությունների բացառիկ անմարդկայնությունը ակնհայտ էր արդեն Առաջին աշխարհամարտի ընթացքում, եւ 1916 թ., ռազմական գործողությունների ամենաթեժ շրջանում, Ռուսաստանի, Անգլիայի եւ Ֆրանսիայի ներկայացուցիչները թուրքերի գործողությունները արեւմտահայության դեմ անվանեցին հանցանք մարդկության դեմ: Հայկական պատմագրության մեջ տասնամյակներ շարունակ, խորհրդային պատմագրության ազդեցությամբ, ընդունված էր Առաջին աշխարհամարտը իմպերիալիստական եւ անարդարացի պատերազմ անվանել: Բայց այդպես չէին մտածում Ռուսաստանի տարբեր կողմերում ապրող տասնյակհազարավոր հայերը, ովքեր կամավոր գալիս էին Կովկասյան ճակատ՝ փրկելու Արեւմտյան Հայաստանը եւ օգնելու իրենց թուրքահայ եղբայրներին: Այդ հանգամանքների, օգնությունների, երիտասարդության շրջանում տիրող ազգային-հայրենասիրական վերելքի մասին խորհրդային տարիներին աշխատում էին շատ չխոսել, որովհետեւ պատերազմն անարդարացի էր, իսկ հայոց աղետի պատճառներն այդ աղետի անարդարացիության մեջ էին: Փաստը մնում է փաստ, որ Առաջին աշխարհամարտի վերջին փուլում, երբ տապալվեց կայսերական իշխանությունը Ռուսաստանում, իսկ ութ ամիս անց նաեւ Ժամանակավոր կառավարությունը, իշխանությունը ստացած բոլշեւիկների առաջին դեկրետներից մեկը վերաբերում էր Արեւմտյան Հայաստանին անկախություն շնորհելուն եւ այնտեղ խորհրդային կարգեր հաստատելուն: Սակայն Ժամանակավոր կառավարության տապալումից հետո, երբ ըստ էության քայքայվեցին Համաշխարհային պատերազմի բոլոր ռազմաճակատները եւ ռուս զինվորները լքեցին ու հեռացան անարդարացի անվանվող պատերազմի ռազմաճակատներից, Արեւմտյան Հայաստանն արդեն դատարկված էր հայությունից, իսկ հայկական սակավաթիվ զինված ուժերը միայնակ ուղղակի անկարող էին պահել հայաթափված երկրի ռազմաճակատային դիրքերը: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտի պայմաններում, Փարիզի խաղաղության կոնֆերանսում եւ Վերսալյան իրավական համակարգում, Արեւմտյան Հայաստան կամ Տաճկահայաստան հասկացությունները դեռ քաղաքացիության իրավունք ունեին, որովհետեւ հաղթած դաշնակիցները, արդեն առանց Ռուսաստանի, քննարկում էին նորաստեղծ Հայաստանի Հանրապետության եւ թուրքահայության քաղաքական պահանջները եւ մասնավորապես Ցեղասպանության ընթացքում կրած վնասների փոխհատուցման հարցերը: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, արեւմտահայության ոչնչացման պայմաններում հայկական աղետի հարվածն այնքան մեծ էր, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ եւ չդիմացավ թուրքական հարձակման ուժին:

1920-21թթ. ցավալի պայմանագրերի բովանդակությունը հայտնի է ամենայն մանրամասնությամբ: 1923 թ. Լոզանի պայմանագրով, փաստորեն, դադարեց արդիական լինել Արեւմտյան Հայաստան կամ Թուրքական Հայաստան եզրը: Հայաթափման նպատակով Արեւմտյան Հայաստանում եւ Անատոլիայի մնացած շրջաններում բացառիկ դաժանությամբ հայկական ներկայությունը վերացրած թուրքական իշխանությունները հասան իրենց նպատակներին:

Ես ճանաչում եմ տարբեր հայերի, ովքեր հավաքում եւ խնամքով պահում են աշխարհի տարբեր երկրներում տպվող աշխարհագրական, քաղաքական եւ պատմական ատլասներ ու քարտեզներ, որտեղ վերջին 90 տարիներին դեռ պահպանվում են Հայկական լեռնաշխարհ եւ Արեւմտյան Հայաստան հասկացությունները: Բայց արեւմտյան քաղաքական քարտեզագրության մեջ արդեն վաղուց այդ եզրերին փոխարինելու են գալիս Արեւելյան Անատոլիա կամ Քուրդիստան եզրերը: Պարզ է, որ միջազգային հարաբերություններում պետք են աշխատող փաստարկներ եւ իրականությունը արտահայտելու ընդունելի ձեւեր, մասնավորապես քաղաքական աշխարհագրության մեջ: Բայց աշխարհի տարբեր լեզուներով պարբերաբար եւ անընդհատ հրատարակվող քարտեզներում Արեւմտյան Հայաստան, իսկ ավելի ընդհանուր Հայկական լեռնաշխարհ աշխարհաքաղաքական հասկացությունը գործածության մեջ պահելը, կարծում ենք, քաղաքական կարեւորության խնդիր է: Սա մեր սերնդի բազում քաղաքական անելիքներից մեկն է:

### Հիշել Առաջին աշխարհամարտի հայ հերոս զինվորականներին

Հիշում եմ մեր խոշորագույն պատմաբաններից պրոֆեսոր Լենդրուշ Խուրշուդյանի դասախոսությունները, երբ նա ասում էր, թե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ միայն Կովկասից բանակ է զորակոչվել ամենաքիչը 220 000 հայ: Այդ թվաքանակի 5%-ից էլ պակասն է կռվել հայ կամավորական գնդերի կազմում եւ 10%-ից պակասը՝ կազմավորել Հայկական կորպուսը: Ահա թե ինչու, ասում էր վաստակաշատ պրոֆեսորը, առնվազն անհեթեթություն պետք է որակել թուրքական կեղծ գիտական այն տեսակետները, ըստ որոնց արեւմտահայերի տեղահանություններն ու ջարդերը պատասխան էին հայ զինվորականության գործողությունների, որոնք նպատակ ունեին անջատել Արեւմտյան Հայաստանը եւ ստեղծել անկախ Հայաստան: Այս կեղծ ու մտացածին թեզը նպատակ ուներ ուրանալու նաեւ այն ակնհայտ ճշմարտությունը, որ երիտթուրքական իշխանությունները Առաջին աշխարհամարտի հենց առաջին օրերին բանակ զորակոչեցին առնվազն 60 000 հայ զինվորների, բայց նրանց չտվեցին զենք, քշեցին պարտադիր աշխատանքների, իսկ հետո զանգվածաբար սպանեցին կամ դավանափոխ արեցին միայն այն բանի համար, որ նրանք հայկական ծագում ունեն: Հայ զինվորականները ռուսական բանակի կազմում մարտնչել են բոլոր ռազմաճակատներում եւ պատերազմի վերջի քայքայման, դրան հաջորդած հեղափոխության եւ քաղաքացիական կռիվների հետեւանքով ցրված են եղել անծայրածիր Ռուսաստանի ամենատարբեր կողմերում: Իմ ընկեր, պատմագիտության դոկտոր Վահան Մելիքյանի տվյալներով՝ 1918 թ. միայն Բաքվում կենտրոնացած էր 40 000-անոց հայկական զորախումբ, որը Ստեփան Շահումյանի եւ գեներալ Բագրատունու համատեղ մտահղացմամբ նախատեսվում էր ուղղել դեպի Թիֆլիս, գրավել ու խորհրդայնացնել այն, իսկ այնուհետեւ ուղարկել դեպի Արեւմտյան Հայաստան, հեռացող ռուսական զորքերին փոխարինելու եւ ռազմաճակատի գիծը պահելու համար: Դրամատիկ եւ բուռն քաղաքական զարգացումների արդյունքում այդ ծրագիրը չիրականացավ, իսկ հայկական վերոհիշյալ զորախումբը քիչ ավելի ուշ, անիշխանության եւ անկազմակերպվածության պատճառով ուղղակի ցրվեց: Հայտնի է նաեւ, որ 1919 թ. նորաստեղծ Հայաստանի Հանրապետության բանակը 40 000-անոց էր:

Հայտնի է, օրինակ, որ Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո, 1920 թ. դեկտեմբեր, 1921 թ. հունվար ամիսներին բոլշեւիկյան իշխանությունները ձերբակալեցին եւ Ռուսաստան աքսորեցին հարյուրավոր (որոշ տվյալներով՝ մոտ հազար) հայ սպաների, որոնց մեծագույն մասը երիտասարդ մտավորականներ էին, ովքեր եկել էին Կովկասյան ճակատ Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը մասնակցելու համար եւ հետո մնացել էին Հայաստանում՝ ծառայելու նորաստեղծ Հայաստանի զինված ուժերում: Հայ մտավորականության, առանց չափազանցության, սերուցքը կազմող այդ զինվորականները աքսորվեցին Սոլովկիի եւ այլ ճամբարներ, նրանց մեծագույն մասի հետագա կենսագրությունն ուղղակի անհայտ է: Պատմաբանները ուսումնասիրել են նաեւ, որ թե՛ Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիներին, թե՛ Հայաստանի խորհրդայնացումից հետո, ձեռնարկվել են բազմաթիվ փորձեր եւ գործադրվել են ջանքեր Ռուսաստանի տարբեր մասերում խմբված հայ զինվորներին հայրենիք տեղափոխելու համար: Բայց այդ ջանքերը միայն մասամբ են հաջողվել: Խորհրդային տարիներին, երբ իշխում էր այն գաղափարախոսական կաղապարը, թե Առաջին աշխարհամարտը իմպերիալիստական է եւ անարդար, դժվար էր ուսումնասիրել այս խնդիրները ամբողջ խորությամբ եւ ճշմարտությամբ: Ովքե՞ր էին այն հայ զինվորներն ու սպաները, որ Թուրքեստանից մինչեւ Լեհաստան հերոսաբար մասնակցել են պատերազմական բոլոր գործողություններին: 1917 թ. ընթացքում Ռուսական հեղափոխության վայրիվերումներում քայքայված բանակի պատմությունը այդքան էլ հետաքրքրական եւ պատվավոր չէր, այնինչ այդ պատերազմում, մասնավորապես նրա Կովկասյան ճակատում, փառքի ու հերոսության շատ էջեր են գրվել:

Եկող տարի միջազգային հանրությունը հարյուրամյակի առիթով ավելի մեծ չափով կանդրադառնա Առաջին համաշխարհային պատերազմի պատմությանը: Մեր երկրում, որտեղ բազմաթիվ հուշարձաններ կան նվիրված Երկրորդ համաշխարհային պատերազմի հայ հերոս մարշալներին, քաղաքացիական պատերազմում զոհվածներին, Հայաստանի առաջին հանրապետության հերոս զորավարներին, չկա եւ ոչ մի հուշարձան, որը գալիք սերունդներին կհիշեցներ ռուսական բանակի կազմում կռված 220 000 հայերի եւ նույն ժամանակ Օսմանյան Թուրքիայում կացնահարված 60 000 հայ զորակոչիկների մասին: Այնինչ սա մեր պատմության անբաժանելի մասն է: Արժե, որ մինչեւ եկող տարվա օգոստոսը մի նման հուշարձան կանգնեցվի Երեւանում: Արժե, որ այսօր, երբ Ռուսաստանում եւ հետխորհրդային մյուս պետություններում հետաքրքրությամբ ուսումնասիրվում են Հոկտեմբերյան հեղափոխությանը նախորդող պատմության, մասնավորապես Առաջին աշխարհամարտի պատմության մութ էջերը, մեր պատմաբանները ձեռնարկեին Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից հայ սպաների ցուցակները կազմելու եւ կենսագրությունները հրատարակելու գործը: Կարծում ենք՝ հարմար ժամանակն է դիմելու ռուսական արխիվներին եւ վերջապես ստանալու նրանց ճակատագրերի մասին պատմող վավերական տեղեկություններ: Պատմությունը ուսանելի է, եթե նրանից դասեր ենք քաղում: Առաջին աշխարհամարտի պատմությունը հայկական աղետի պատմությունն է, որից հետո հայությունը ուժ է գտել եւ վերստին հառնել է միայն հրաշքով:

ԱՐԱՄ ՍԱՖԱՐՅԱՆ,
Քաղաքական վերլուծաբան,
բանասիրական գիտությունների թեկնածու

# «Մոսադը» հասել է Լենքորան

«Թուրան» գործակալությունը, վկայակոչելով անանուն, բայց «միանգամայն վստահելի աղբյուրներ», տեղեկացնում է, որ Ադրբեջանի Լենքորան քաղաքում «մի քանի օր գտնվում է «Մոսադի» հատուկ ստորաբաժանումը»: Այո, խոսքը Իսրայելի հետախուզական ծառայության հատուկ նշանակության ստորաբաժանման մասին է:

Ադրբեջանի պատկան մարմինները այդ տեղեկատվությունը ոչ հաստատել, ոչ հերքել են: Միայն հայտնի է, որ մոտ օրերս Լենքորանում տեղի կունենա ադրբեջանական «Խազար-Լենքորան» եւ իսրայելական «Մակկաբի» ֆուտբոլային թիմերի մրցախաղը, որին ներկա է գտնվելու ֆուտբոլի ադրբեջանական ֆեդերացիայի եւ Socar պետական նավթային ընկերության նախագահ Ռովնագ Աբդուլլաեւը:

Այդ ֆուտբոլային խաղի կապակցությամբ modern.az-ի թղթակիցը Լենքորանից տեղեկագրել է, որ «քաղաքում ձեռնարկվում են հասարակական կարգի եւ անվտանգության պահպանման արտակարգ միջոցառումներ»: Մասնավորապես, Լենքորանում ստեղծվել է «օպերատիվ շտաբ, որտեղ ներգրավված են ուժեր ոստիկանությունից, ՆԳՆ ներքին եւ սահմանապահ զորքերի ստորաբաժանումներ, իսկ խաղադաշտն ամբողջությամբ արգելափակված է մետաղացանցով, որպեսզի ֆանատները մարզիկների վրա վտանգավոր փաթեթներ չնետեն»:

Ըստ haqqin.az-ի՝ իսրայելցի ֆուտբոլիստների անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու պայման առաջադրվել է Իսրայելի կողմից: Բացատրությունը մեկն է եղել՝ «Իրանից ձեռքդ պարզես՝ Լենքորան կհասնես», ինչից հասկացվում է, որ «Մոսադի» հատուկ ստորաբաժանումն ադրբեջանական տարածք է մտել՝ «կանխելու իսրայելցի ֆուտբոլիստների դեմ Իրանից ակնկալվող սպառնալիքները»:

Կողմերն Ադրբեջան-Իսրայել հարաբերությունները որակում են «վստահ-գործընկերային», երբեմն օգտագործվում է նույնիսկ «ռազմավարական դաշնակցություն» ձեւակերպումը: Այս համատեքստում միանգամայն արտառոց է, որ իսրայելական կողմն իր ֆուտբոլիստների անվտանգության ապահովումը չի վստահել Ադրբեջանին: Կամ՝ ինչո՞ւ չի ընտրվել ֆուտբոլային խաղը Բաքվում անցկացնելու տարբերակը, որտեղ, ամենայն հավանականությամբ, իրանական կողմի ձեռքը չէր հասնի:

Իսկ եթե ֆուտբոլային խաղը եւ իսրայելցի մարզիկների «անվտանգության պահպանման անհրաժեշտությունը» սոսկ պատրվա՞կ են: Ի՞նչ երաշխիք, որ մի անգամ պաշտոնապես մուտք գործելով Լենքորան՝ «Մոսադը» ֆուտբոլային խաղի ավարտից հետո «կազմակերպված ձեւով» լքելու է Ադրբեջանի հարավային տեղաշրջանը:

Այդպիսի երաշխիք ոչ ոք չի կարող տալ: Ուստի բացառված չէ, որ «Մոսադն» արդեն իսկ Իրանի դեմ ծրագրած քայլերը դարձնում է իրականություն, եւ իրանա-ադրբեջանական լարվածության «շուտափույթ հաղթահարման» մասին ադրբեջանական որոշ քաղաքագետների հավաստիացումներն ընդամենը «օդի տատանումներ» են:

Մանավանդ երեկ հայտնի է դարձել, որ օգոստոսի 3-ին նախատեսված՝ Իրանի նախագահի երդմնակալության արարողությանը Բաքվից ներկա կգտնվի չափազանց համեստ պատվիրակություն՝ Միլլի մեջլիսի խոսնակ Օքթայ Ասադովի գլխավորությամբ: Թեեւ իրանական կողմից պաշտոնական հրավերն ստացվել է «նորին գերազանցություն նախագահ» Իլհամ Ալիեւի անունով:

Վ. Ա.

# Ասանժը WikiLeaks կուսակցություն է հիմնել Ավստրալիայում



WikiLeaks կայքէջի հիմնադիր Ջուլիան Ասանժը հուլիսի 25-ին պաշտոնապես հայտարարել է, որ ստեղծվել է WikiLeaks կուսակցություն, որը սեպտեմբերին կմասնակցի Ավստրալիայի խորհրդարանական ընտրություններին:

Նրա խոսքերով, կուսակցության գլխավոր արժեքներն են թափանցիկությունն ու օրինականությունը, որոնց համապատասխան կքննարկվեն ավստրալացիների կարեւոր խնդիրները՝ հարկումը, փախստականների ընդունումը, կլիմայի փոփոխությունները եւ այլն: Այդ մասին Ասանժը հայտարարել է ավստրալական «Օստելիան» թերթին տված հարցազրույցում:

Կուսակցությունը 7 թեկնածու կառաջադրի Նոր Հարավային Ուելսի, Վիկտորիայի եւ Արեւմտյան Ավստրալիայի նահանգներից սենատոր ընտրվելու համար:

Ասանժի խոսքերով, Կանբերայում նստած ազնիվ քաղաքական գործիչներն ամենից շատ վախենում են սենատում WikiLeaks-ի լրագրողների հնարավոր ներկայությունից:

Պ. Ք.

# Սնոուդենն արժանացել է գերմանական մրցանակի

**ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը, որին ԱՄՆ-ում մեղադրում են գաղտնի տեղեկությունների հրապարակման համար, արժանացել է գերմանական Wistleblower մրցանակի, հաղորդում է «Դոյչե վելլե» ռադիոկայանը: Սնոուդենը կստանա պատվոգիր եւ երեք հազար եվրո դրամական պարգեւ:**

**Պարգեւատրման պաշտոնական արարողությունը տեղի կունենա օգոստոսին Բեռլինում: Անհրաժեշտ փաստաթղթերի բացակայության պատճառով ինքը՝ Սնոուդենը, դժվար թե կարողանա ներկա գտնվել:**

**Կազմակերպիչները գնահատում են Սնոուդենի վաստակը ինչպես ԱՄՆ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրացիների լրտեսման ամերիկյան գաղտնի ծրագրի բացահայտման գործում: Բացի դրանից, նրանք Գերմանիայի կառավարությանը հորդորում են որպես վկայի հարցաքննել Սնոուդենին՝ գերմանացիների լրտեսման վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Կազմակերպիչները նաեւ հանդես են գալիս Գերմանիայում Սնոուդենին քաղաքական ապաստան տրամադրելու օգտին:**



**Մրցանակը շնորհում են Գերմանացի գիտնականների միավորումը, Ատոմային էներգետիկայի հակառակորդ իրավաբանների միջազգային միավորումը եւ Transparency International իրավապաշտպան կազմակերպության գերմանական մասնաճյուղը: Մրցանակը երկու տարին մեկ հանձնվում է այն մարդկանց, ովքեր կարեւոր տեղեկություններ են բացահայտել իրավախախտումների, ժողովրդավարության ոտնահարման եւ շրջակա միջավայրին հասցված վնասի վերաբերյալ, նշում է գերմանական Nachrichten-tv հեռուստաալիքը:**

ՎԹԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

# Իսպանիայում յոթնօրյա սուգ է գնացքի աղետից հետո

## *Շարժակազմը ստուգվել էր հենց աղետի օրը*



Իսպանիայի հյուսիսում՝ Գալիսիայում հուլիսի 24-ի ուշ երեկոյան տեղի է ունեցել երկաթուղային խոշոր աղետ: Մադրիդից դեպի Ֆեռոլ մեկնած Alvia մարդատար գնացքը Սանտյագո-դե-Կոմպոստելա կայարանի մատույցներում դուրս է եկել ռելսերից: Ականատեսների վկայությունների համաձայն, չորս վագոններ մի քանի անգամ շրջվել են, ապա մխրճվել իրար մեջ: Գնացքում եղել են 218 ուղեւոր եւ երկաթուղային ընկերության 4 աշխատակից:

Ֆրանսպրես գործակալությունը հաղորդում է, որ հուլիսի 25-ի առավոտյան փրկարարները գտել էին 73 զոհերի մարմիններ: Գալիսիայի իրավապահ մարմինների տվյալներով, եւս 4 մարդ մահացել է հիվանդանոցում: Տեղական իշխանություններին վկայակոչելով՝ BBC-ն հաղորդում է 78 զոհի մասին: Վիրավորների թիվը 143 է:

Իսպանական լրատվամիջոցների տվյալներով, վթարի պահին գնացքի արագությունը զգալիորեն գերազանցել է թույլատրելի սահմանագիծը: Այդ ուղեմասում թույլատրվում է ժամում 80 կմ արագություն, մինչդեռ շարժակազմը, ըստ նախնական տեղեկությունների, սլացել է մինչեւ 220 կմ/ժամ արագությամբ:

Աղետից քիչ անց Սանտյագո-դե-Կոմպոստելա է ժամանել Իսպանիայի վարչապետ Մարիանո Ռախոյը, որը ծննդով այդ քաղաքից է: Իսպանիայի Խուան Կառլոս թագավորը եւ գահաժառանգ իշխան Ֆելիպեն հուլիսի 25-ին չեղյալ են հայտարարել իրենց պաշտոնական միջոցառումները: Աղետից հետո Գալիսիայում յոթնօրյա սուգ է հայտարարված:

Կաթոլիկ եկեղեցու հովվապետ Ֆրանցիսկ պապը, որը հայրապետական այցով գտնվում է Բրազիլիայում, համայն աշխարհի կաթոլիկներին կոչ է արել աղոթել երկաթուղային աղետի զոհերի համար:

«Ֆիգարո» թերթի կայքէջը տեղեկացնում է, որ Գալիսիայի իշխանությունները բացառել են ահաբեկչության վարկածը: Ինչ վերաբերում է գնացքը շահագործող Renfe պետական ընկերությանը, դրա նախագահը հուլիսի 25-ին հայտարարել է, որ շարժակազմը տեխնիկապես սարքին վիճակում էր եւ ստուգման է ենթարկվել հենց նախորդ օրվա առավոտյան:

Սանտյագո-դե-Կոմպոստելայի երկաթուղային աղետը խոշորագույններից մեկն է Իսպանիայի պատմության մեջ: Զոհերի թվով այն զիջում է միայն 1942 թ. Գալիսիայում պատահած աղետին, երբ զոհվեցին հարյուրավոր մարդիկ:

# Ներկայացուցիչների պալատը մերժեց լրտեսումը սահմանափակող օրինագիծը

ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատը մերժել է այն օրինագիծը, որը սահմանափակում է հեռախոսազրույցներին ու մասնավոր նամակագրությանը հետեւելու ամերիկյան հատուկ ծառայությունների հնարավորությունները: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ փաստաթուղթն մերժվել է 205 «կողմ» եւ 217 «դեմ» քվեներով:

Օրինագծի հեղինակը հանրապետական Ջաստին Էմեշն է: Եթե Ներկայացուցիչների պալատը եւ Սենատը ընդունեին փաստաթուղթը, եւ նախագահ Օբաման ստորագրեր այն, ապա հեռախոսազրույցների եւ նամակագրության լրտեսումը կդառնար անօրինական:

Օրինագծի ընդունմանը դեմ էին Սպիտակ տունը եւ ազգային անվտանգության ծառայությունների փորձագետները: Հանրապետականների մեծամասնությունը նույնպես քննադատում էր փաստաթուղթը: Այն պաշտպանում էին հիմնականում դեմոկրատները:

Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) կողմից քաղաքացիների վերաբերյալ խորհրդապահական տեղեկությունների հավաքման օրինականությունը հիմնավորվում է 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից հետո ընդունված «Հայրենասիրական ակտով»: Հատուկ ծառայությունների ղեկավարությունը պնդում է, թե հեռախոսազրույցների եւ նամակագրության լրտեսումը անհրաժեշտություն է ահաբեկչության դեմ մղվող պայքարում:

Ամերիկյան հատուկ ծառայությունների համացանցային եւ հեռախոսային լրտեսման գաղտնի ծրագրերի գոյության մասին անցյալ ամիս ամերիկյան եւ բրիտանական թերթերին հայտնել էր ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենը:

# Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախումբը հանդես կգա Երեւանում

«Երեւանյան հեռանկարներ» միջազգային փառատոնը պատրաստվում է կազմակերպել Բեռլինի ֆիլհարմոնիկ նվագախմբի բացօթյա համերգը Երեւանում, որն ամենայն հավանականությամբ տեղի կունենա 2014թ.: Բացօթյա համերգ կազմակերպելու պատճառը Արամ Խաչատրյան համերգասրահի փոքր լինելն է աշխարհահռչակ այդ նվագախմբի համերգների համար:

Ի դեպ, հաջորդ տարի «Երեւանյան հեռանկարներ» միջազգային փառատոնը կտոնի իր ստեղծման 15-րդ հոբելյանը, որի շրջանակում Հայաստան կայցելեն Եվրամիության անդամ երկրների երաժշտական փառատոնների ղեկավարները, քաղաքական գործիչներ եւ այլք:

Նման համերգների շնորհիվ միաժամանակ զարգանում է տուրիզմը Հայաստանում:

# Փարաջանովի աշխատանքների ցուցադրություն Օդեսայում

Օդեսայի միջազգային կինոփառատոնի շրջանակում ներկայացվել են Փարաջանովի աշխատանքները եւ տեղի է ունեցել ֆիլմերի ռետրոսպեկտիվ ցուցադրությունը: Ինչպես հաղորդում է «Արմենպրեսը», ցուցահանդեսին ներկայացված է եղել Փարաջանովի 40 աշխատանքները, իսկ ռետրոսպեկտիվ ցուցադրության ընթացքում հանդիսատեսի դատին են ներկայացվել նրա «Սայաթ-Նովա», «Մոռացված նախնիների ստվերները», «Հակոբ Հովնաթան», «Սուրամի ամրոցի լեգենդը» ֆիլմերը: Ի դեպ, Փարաջանովի աշխատանքների ցուցադրություն իրականացվում էր առաջին անգամ, իսկ ապագայում պատրաստվում են ցուցադրություններ կազմակերպել ինչպես Վիլնյուսում, այնպես էլ Ստամբուլում:

# Ժամանակակից արվեստի փառատոն

«Չորս կարիճ» հասարակական կազմակերպությունը պատրաստվում է 2014-15 թվականներին Երեւանում իրականացնել «Infinity Art Festival» ժամանակակից արվեստի փառատոն: Փառատոնի բոլոր միջոցառումները կանցկացվեն հասարակական կազմակերպության «Աշխարհն ինչպիսին է եւ ինչպիսին պետք է լինի» նշանաբանի ներքո: «Չունենալով պետականություն՝ երկար տարիներ մենք չենք կարողացել մեր խոսքն ասել աշխարհին, իսկ այն մանր նախագծերը, որոնք այսօր իրականացվում են Հայաստանում, ցածր մակարդակի վրա են: Մշակույթի շնորհիվ մենք կարող ենք մեր երկիրը դարձնել այլ պետությունների մրցակիցը: Պատրաստվում ենք մեր նախաձեռնությանը ներգրավել տարբեր երկրներ ներկայացնող արվեստի հայտնի գործիչների: Բնականաբար շատ ռեսուրսներ են պետք նախագիծն իրականացնելու համար»,- «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ նշել է «Չորս կարիճ» կազմակերպության ղեկավար Հայկ Մութաֆյանը:

Նախաձեռնության հեղինակը նշում է, որ փառատոնը կազմակերպելու համար լուրջ ֆինանսական աղբյուրներ են անհրաժեշտ: Կազմակերպությունը կհամագործակցի նաեւ ՀՀ մշակույթի նախարարության հետ, բայց ավելի շատ ցանկություն ունի նախաձեռնությանը ներգրավել ոչ պետական կառույցների ներկայացուցիչներին:

«Փառատոնին ընդառաջ օգոստոս-սեպտեմբերից սկսում ենք պրոմո-ակցիաներ իրականացնել՝ երաժշտական միջոցառումների, ցուցահանդեսների տեսքով, որպեսզի դրանց շնորհիվ ներգրավենք աջակիցների»,- նշեց Հայկ Մութաֆյանը:

«Չորս կարիճ» հասարակական կազմակերպության նախագահը նշել է, որ իրենք պատրաստվում են ստեղծել հատուկ հանձնաժողով, որում ներգրավված կլինեն մշակույթի գործիչներ: Հանձնաժողովն ամեն ամիս կներկայանա մամուլի ասուլիսներով եւ կքննարկի սոցիալ-մշակութային հարցեր: Մշակույթին կանդրադառնան նաեւ հատուկ ստեղծված հեռուստահաղորդումների միջոցով:

«Չորս կարիճ» հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 2008 թվականին եւ զբաղվում է տարածաշրջանի ժամանակակից արվեստի զարգացմամբ:

# Արտեմ Սարգսեանի «Փրկութեան բանալի» հատորին ներկայացումը

Գրասէր հասարակութիւն մը փութացած էր Գլենտէյլի կեդրոնական հանրային գրադարանի հանդիսասրահը, ներկայ գտնուելու Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի թղթակից անդամ դոկտ. Արտեմ Սարգսեանի «Փրկութեան բանալի» հատորի ներկայացման: Թէքէեան մշակութային միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղի ատենապետ Վաչէ Սեմերճեանի հակիրճ բացման խօսքէն ետք, ընթացք առաւ յայտագիրը: Առաջին հերթին խօսք առաւ երկարամեայ դասախօս, «Նոր օր» շաբաթաթերթի նախկին խմբագիր եւ գիրքերու հեղինակ՝ ընկեր դոկտ. Մինաս Գոճայեան, որ բախտաւորութիւնը ունեցեր էր օրուան մեծարեալին պաշտօնակիցը ըլլալու Մելգոնեան կրթական հաստատութենէն ներս, 1970-ական թուականներուն: Մ. Գոճայեան ներկայացնելով Արտեմ Սարգսեանի կենսագրութիւնը, յիշատակեց արեւմտահայերէնի մասնագէտ բանասէրին գիտական աշխատութիւնները, հրատարակած գործերը, ներկայացուց մանաւանդ ուրամիտ, բանասիրական լայնածիր գիտութեան տէր հեղինակը, պաշտօնակիցը եւ բարեկամը:

Ապա բեմ հրաւիրուեցաւ հայերէն լեզուի դասախօս տիկին Նազելի Գոճայեանը, որ հաճելի հատուածի մը ընթերցումը կատարեց նոր հրատարակուած հատորէն, գաղափար մը տալու համար վէպի լեզուին ու բովանդակութեան մասին:

Երրորդ խօսք առնողն էր ծանօթ մտաւորական, մամուլի անխոնջ աշխատակից Վահան Բահարեանը, որ վայելած է Ա. Սարգսեանի բարեկամութիւնը, երբ ուսանողական շրջանին ինք եւս գիտաշխատող մըն էր: Բահարեան ամփոփ ներկայացումը կատարեց «Փրկութեան բանալի» գործին: Երկու հիմնական բաժիններով այս գործը կը բաղկանայ «Փորձութիւն» եւ «Փրկութիւն» մասերէ: Գործին ընդմէջէն Վահա Բահարեան ներկայացուց արդի քաղաքակրթութիւնը յուզող հրատապ հարց մը՝ աշխարհի կործանումը, որ ենթադրաբար պիտի պատահէր 2012 տարուան Դեկտեմբեր 21-ի օրը՝ որմէ ծնունդ առած է գիրքին ենթավերնագիրը՝ 12/21/2012: Հեղինակին ստեղծած կերպարը՝ Հանս Վերֆէլ, սիրոյ եւ տագնապի, պայքարի երազանքներով հարուստ վէպին հիմնական առանցքը կը կազմէ:

Հատորի ներկայացումէն ետք բեմ հրաւիրուեցաւ հեղինակը, որ շնորհակալական անկեղծ արտայայտութիւններ ունէր կազմակերպիչներուն եւ յայտագիրի մասնակիցներուն ուղղուած:

Գինեձօնի կարճ արարողութեամբ վերջ գտաւ հանդիսութիւնը:

Հեղինակը սովորութիւն դարձող ձեւին դիմեց հասնելու համար ընթերցողներուն. ան հրատարակուած հատորէն մէկական օրինակ նուիրեց իւրաքանչիւր ներկայի:

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

# «Կարինե» օպերետը նորարարական մոտեցմամբ՝ Արցախում

Օրերս Տիգրան Չուխաջյանի «Կարինե» օպերետը ցուցադրվեց Արցախում՝ Տիգրանակերտի ամրոց-թանգարանում: Օպերետը ներկայացվեց Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի օպերայի պատրաստման բաժնի վարիչ, պրոֆեսոր, Գ. Սարյանի անվան օպերային ստուդիայի գլխավոր ռեժիսոր **Հովհաննես Հովհաննիսյանի** ղեկավարությամբ:



«**Ազգի**» հետ զրույցում ռեժիսորն ուրախությամբ նշեց, որ արդյունքը հաջող էր. «Հետաքրքրական լուծում էինք տվել՝ բեմադրությունը կատարելով Տիգրանակերտի թանգարանում՝ բացօթյա: Բեմականությունը ուղղահայաց էր, ոչ թե, ինչպես ընդունված է՝ հորիզոնական: Փաստորեն մենք այդ տարածքի բացումը կատարեցինք, ապագայում այնտեղ կարող են նոր բեմադրություններ իրականացնել: Ի դեպ, այնտեղ ակուստիկան ուղղակի հրաշալի է»: Հ. Հովհաննիսյանն ասաց նաեւ, որ ներկայացմանն ընդգրկված են եղել Արցախի «Վարարակն» պետական երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Նինա Գեւորգյան), օպերային ստուդիայի նվագախմբի փոքր կազմը, որը բաղկացած է Կոնսերվատորիայի սաներից: Օպերետում գլխավոր դերերգերով հանդես են եկել Սոֆա Մելքումյանը (Կարինե), Սասուն Պողոսյանը (Արմեն), Վահան Բեգլարյանը (Հորհոր աղա), Արսեն Օհանջանյանը (Մարգար), Տաթեւ Եվրիյանը (Շուշան):

«Դերակատարներն այնքան լավ խաղացին, որ շատ հաճախ նույնիսկ պրոֆեսիոնալների մոտ չի ստացվում այդպես մտնել դերի մեջ ու մատուցել: Կամերային-կոմիկական այս օպերետում բոլոր հերոսները կարողացան հասունացնել կերպարները եւ լավ ներկայացնել հանդիսականին»,-նշեց ռեժիսորը: Նա ապշած էր հանդիսատեսի ծափերից եւ ուշադրությունից: Մշակութասեր հանրության հոսքի պատճառով նա ստիպված է եղել փոփոխություններ կատարել. «Տիգրանակերտն Ստեփանակերտից 40 կմ հեռու է, սակայն ժողովուրդն այնքան շատ էր, որ ստիպված էի մինչ ներկայացման սկիզբը որոշ փոփոխություններ կատարել, քանի որ ներկայացման գործողությունները տեղի էին ունենում ոչ թե հատուկ պատրաստված բեմում, այլ հենց բացօթյա թանգարանում»:

Ռեժիսորն ընդգծեց նաեւ, որ անհրաժեշտ է Արցախում օպերային թատրոն հիմնել, քանի որ կա պոտենցիալ. «Շատ կարեւոր է ստեղծել պայմաններ, որպեսզի երիտասարդներն ստանալով կրթություն չմեկնեն արտերկիր: Աշխատելով այդ երգչախմբի հետ, հասկացա, որ ղարաբաղցի երիտասարդներն սովորելու, օգտակարն ու գեղեցիկը իրենցը դարձնելու լավ հատկանիշ ունեն, ամեն բառը որսում են»:

Նշենք, որ երկու տարի առաջ Արցախում Հ. Հովհաննիսյանը եւս մի բեմադրություն է իրականացրել՝ Արմեն Տիգրանյանի «Անուշը». «Ղարաբաղցիներին ներկայացնելով «Անուշը», հասկացանք, որ նրանք սիրում են եւ ընդունում օպերային արվեստը, որից հետո էլ «Կարինե» օպերետի գաղափարը ծագեց»:

Ռեժիսորը վերջում ընդգծեց, որ օպերետի ամենագլխավոր խնդիրը ղարաբաղցու արեւմտահայերեն խոսելն էր:

Նշենք, որ այդ ամենը կյանքի է կոչվել ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նաիրա Աղաբալյանի աջակցությամբ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Մի լուսանկարի պատմություն

Անցնում էի Հանրապետության փողոցով եւ հանկարծ նկատեցի երկհարկանի սեւ շենք, որը նախկին Ալավերդյան թիվ 37-ն էր: Մոտ տեղափոխվեցի 61 տարի առաջ, երբ այդ շենքի երկրորդ հարկում նշում էինք Եղիշե Չարենցի ավագ դուստր՝ Արփենիի 20-ամյակը 1952 թվականն էր:

Արփենին այստեղ չի ապրել: 1937 թ. Չարենցին բանտարկելուց հետո կնոջն աքսորում են, ավագ դստերը՝ Արփենիին հանձնում Քանաքեռի մանկատուն, իսկ Անահիտին թողնում մորական տատի մոտ: Արփենին մանկատան դպրոցը ավարտելուց հետո տեղափոխվում է համալսարանի հանրակացարան: Քննությունները հանձնում եւ ընդունվում բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի եւ գրականության բաժինը:

Արփենիի ծննդյան 20-ամյակը հանրակացարանում չէինք կարող նշել: Եթե որեւէ մեկը հայտներ եւ տեսներ, որ մենք թեկուզ միայն մեր սենյակի աղջիկներով նշում ենք Չարենցի դուստր ծնունդը եւ արտասանում նրա հոր որեւէ բանաստեղծություն, լուրջ խնդիր կունենայինք:

Ուստի երեկոյան գնացինք նրա տատիկի տանը նշելու, ինչ անց եկավ Գեւորգ Էմինը՝ երիտասարդ, հաճելի արտաքինով: Նա նվեր էր բերել. գեղեցիկ, փոքր տուփ, մեջը 3 զեֆիր՝ վարդագույն, որ ժամանակին նորույթ էր եւ թանկ արժեր:

Արփենիի տատիկը սիրալիր էր եւ համեստ: Հյուրասիրության այս նկարի 6 աղջիկներն էինք, երիտասարդը ձախից՝ չորրորդի նշանածն էր:

Արփենին բարձրացավ սեղանի վրա եւ լացակումած, արտաբուխ արտասանեց.

«Ես իմ անուշ Հայաստանի...»-ն:



*Քոչարյան Մանուշակ, Ասատրյան Վիլենա, Պեպելյան Լենա, Շահնազարյան Էմմա, Չարենց Արփիկ, Եսայան Լենա. 31. XII.1952թ.*

«Բոլորը քեզ, բոլորը քեզ, դու չմրսես ձմռան ցրտում, բոլորը քեզ...»:

Ձմեռն անցավ, սառույցը հալվեց, գարունը եկավ հաճելի նորությամբ:

Կառավարությունը թույլատրեց տպագրել Եղիշե Չարենցին:

Չարենցի ձեռագրերը եւ մի քանի գրքեր Ալավերդյան թիվ 37 շենքի բակում, հողի մեջ թաղված արկղում էին: Դեղնած ձեռագրերը փտած էին, աջ եզրերը փշրված հուշ էին:

Դասերից հետո երեկոյան սրիչով զգուշությամբ բացում էինք թերթերը, կարողանում էինք միայն մի երեսը արտագրել, մեր տկար վիճակով տողերի վերջավորությունները մի կերպ հարմարեցնում էինք:

Լենա Պեպելյանը (ձախից) ժուռնալիստիկայի ֆակուլտետից, Լենա Եսայանը աշխարհագրականից եւ ես՝ ֆիզմաթի մեխանիկայից, Էմման անգլիական բաժնից, Վիլեն Ասատրյանը՝ հայկական բանասիրականից եւ վեցերորդը՝ Արփինեն: Հանրակացարանի մեր սենյակ հաճախ էին գալիս Գեւորգ Էմինը, Սողոմոն Տարոնցին, որին վստահեցին խմբագրելու աշխատանքը, եւ Նվարդը՝ Գեւորգ Էմինի կինը, որ Վահան Տերյանի աղջիկն էր:

Ձեռագրերի արկղի մեջ էր նաեւ Չարենցի «Գիրք ճանապարհի»-ն եւ «Պատգամ» բանաստեղծությունը, որի ամեն տողի առաջին տառով «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» հայտնի խոսքը:

Արփինեն պատմում էր, որ հայրը Թիֆլիսում գինետանն այս մասին ասել է: Դրանից հետո նրան բանտարկել են:

Գիրքը տպագրեցին նրա համար, որ Լենինի մասին 1920 թ.-ից հետո որոշ ժամանակ որեւէ բանաստեղծություն չէր գրվել, իսկ Չարենցը ուներ:

Ահա այդ գրքի տպագրության պատճառը:

ՄԱՆՈՒՇԱԿ ՔՈՉԱՐՅԱՆ
(Թոշակառու)

# «Շիրակը» չօգտագործեց հաջորդ փուլ մտնելու հնարավորությունը



Ինչպես 3 տարի առաջ «Փյունիկին», այնպես էլ այժմ «Շիրակին» չհաջողվեց հաղթահարել Սերբիայի չեմպիոն Բելգրադի «Պարտիզանի» արգելքը: Սակայն եթե «Փյունիկը» 2 խաղերում էլ զիջել էր մրցակցին (1-3, 0-1), ապա «Շիրակը» «Պարտիզանի» հետ մրցավեճում հաղթելու լավ հնարավորություններ ուներ: Առաջին խաղում Գյումրիում «Շիրակն» ավելացված ժամանակում գոլ բաց թողեց ու չկարողացավ պահպանել հաղթական հաշիվը: Բելգրադում էլ շիրակցիները կարող էին լուծել ուղեգրի հարցը, սակայն կրկին չկարողացան իրացնել գոլային պահերը:

Ճիշտ է, առաջին խաղակեսում դաշտի տերերը որոշակի ճնշում էին գործադրում հյուրերի դարպասին եւ 2 անգամ մոտ էին հաջողությանը: Իսկ ահա ընդմիջումից հետո, երբ 55-րդ րոպեին դաշտից հեռացվեց «Պարտիզանի» պաշտպան Վլադիմիր Վոլկովը, որը Գյումրիում իր թիմին փրկել էր պարտությունից՝ հավասարեցնելով հաշիվը, «Շիրակի» հաջողության հասնելու հնարավորությունները զգալիորեն աճեցին: Շիրակցիները սկսեցին ավելի մեծ ուժերով ու համարձակորեն գրոհներ կազմակերպել, իսկ խաղի վերջին 10 րոպեներին հյուրերը պարզապես պաշարել էին «Պարտիզանի» դարպասը: Սակայն ցավոք, այդպես էլ գնդակը չհայտնվեց մրցակցի դարպասում: «Պարտիզանին» հաջողվեց անառիկ պահել սեփական դարպասն ու հաջորդ փուլի ուղեգիր նվաճել:

Այսպես «Շիրակը» չպարտվելով մրցակցին, դուրս մնաց հետագա պայքարից:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Վարդան Բիչախչյան** («Շիրակ»)-2 հանդիպումներից հետո միայն ափսոսանքի զգացում ունեմ: 2 խաղերում էլ մենք առավելություն ունեինք, բայց արդյունքում հաջորդ փուլ դուրս եկավ «Պարտիզանը», որին շնորհավորում եւ հետագա հաջողություններ եմ մաղթում: Ֆուտբոլում բախտի գործոնը մեծ նշանակություն ունի: 2 հանդիպումներում էլ գոլային պահեր ստեղծեցինք, սակայն չկարողացանք իրացնել: Այլապես կարող էինք հաջորդ փուլի ուղեգիր նվաճել:

**Վուկ Ռաշովիչ** («Պարտիզան»)-Հայաստանի չեմպիոնն ուժեղ մրցակից էր եւ 2 հանդիպումներում էլ կարողացավ լուրջ խնդիրներ ստեղծել մեզ համար: Այսօրվա խաղում մենք պետք է գոլ խփեինք առաջին խաղակեսում, ինչը թույլ կտար ավելի հանգիստ գործել: Սակայն չկարողացանք իրացնել պահերը: Իսկ խաղավերջը մեզ համար շատ ծանր էր, քանի որ 10 հոգով էինք խաղում ու նյարդային իրավիճակ էր ստեղծվել: Որակավորման 2-րդ փուլից առաջ էլ ասել էի, որ մենք հարգանքով ենք վերաբերվում յուրաքանչյուր մրցակցի, այդ թվում՝ «Շիրակին»: Այժմ պետք է մտածենք բուլղարական «Լուդոգորեցի» հետ խաղերի մասին: Կարծում եմ, որ «Պարտիզանը» 3-րդ փուլում ավելի որակյալ ֆուտբոլ կցուցադրի:

# Ռեւանշը չկայացավ

**Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման երկրորդ փուլի առաջին խաղում Վիլնյուսում «Ժալգիրիսից» 0-2 հաշվով կրած պարտությունից հետո, «Փյունիկը» պատասխան խաղից առաջ հայտնվել էր չափազանց ծանր կացության մեջ: Հաջորդ փուլ դուրս գալու համար «Փյունիկին» անհրաժեշտ էր 3 գոլ խփել՝ սեփական դարպասը պահելով անառիկ:**

**Հաշվի առնելով նախորդ հանդիպումներում «Փյունիկի» ցուցադրած խաղը, դժվար էր հավատալ, որ կհաջողվի հաջորդ փուլի ուղեգիր նվաճել: Սակայն երեկ «Հանրապետական» մարզադաշտում կայացած հանդիպումը ցույց տվեց, որ «Փյունիկը» դրա հնարավորությունն ուներ: Առաջին իսկ րոպեներից փյունիկցիները նետվեցին գրոհների: Դրանց նպաստեցին նաեւ հյուրերը, որոնք գրեթե ողջ թիմով նահանջել էին սեփական կիսադաշտ եւ մտածում էին միայն դարպասն անառիկ պահելու մասին: Հանուն արդարության հարկ է նշել, որ «Փյունիկն» այս խաղում բավականին լավ ֆուտբոլ ցուցադրեց: Դեռեւս առաջին խաղակեսում փյունիկցիները կարող էին հավասարեցնել երկու խաղերի ընդհանուր հաշիվը, սակայն չօգտագործեցին գոլային պահը:**

**Երկրորդ խաղակեսում «Փյունիկը» վերջապես հասավ հաջողության: 55-րդ րոպեին Գագիկ Պողոսյանի հեռահար փոխանցումից հետո Վիուլեն Այվազյանը մեն մենակ հայտնվելով դարպասապահի դիմաց՝ բացեց խաղի հաշիվը: Հաջողությունից ոգեւորված փյունիկցիները գրեթե ողջ թիմով նետվեցին գրոհի, եւ կարող էին խփել երկրորդ գնդակը: Հիշարժան էր 75-րդ րոպեին Աղվան Պապիկյանի անցումը, որից հետո հյուրերի դարպասապահը փրկեց դրությունը:**



**Ցավոք, ինչպես հաճախ է պատահել հայկական ակումբների հետ, խաղավերջում «Փյունիկը» գոլ բաց թողեց: 86-րդ րոպեին հյուրերի հազվադեպ վտանգավոր հակագրոհներից մեկի ժամանակ Գագիկ Պողոսյանը սեփական տուգանային հրապարակում խախտեց կանոնները եւ Կուկլիսը վերականգնեց հավասարակշռությունը՝ 1-1:**

**Այսպես, ողջ խաղի ընթացքում ունենալով զգալի առավելություն, «Փյունիկը» ոչ միայն չկարողացավ լուծել իր առջեւ դրված խնդիրը, այլեւ հերթական անգամ ձեռքից բաց թողեց հաղթանակը: Այսպիսով, հայկական ակումբների համար եվրոգավաթների հերթական խաղարկությունն ավարտվեց:**

# Ռոնալդինյոն Լիբերտադորեսի գավաթակիր

Բրազիլական «Ատլետիկո Մինեյրոն» իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց Լիբերտադորեսի գավաթը: Պարագվայի «Օլիմպիայի» հետ եզրափակիչ պատասխան խաղում «Ատլետիկո Մինեյրոն» 2-0 հաշվով ռեւանշի հասավ մրցակցի նկատմամբ առաջին խաղում նույն հաշվով կրած պարտության դիմաց: Մրցանակի բախտը վճռվեց հետխաղյա 11 մ հարվածներով, որոնք ավելի դիպուկ իրացրին բրազիլացիները (4-3):

«Ատլետիկո Մինեյրոյի» կազմում հանդես եկող 33-ամյա Ռոնալդինյոն մարզական իր հարուստ կարիերայի ընթացքում առաջին անգամ դարձավ Լիբերտադորեսի գավաթակիր: Դա միակ տիտղոսն էր, որ դեռեւս չէր նվաճել բրազիլացի հանրահայտ ֆուտբոլիստը: 1999-ին նա Բրազիլիայի հավաքականի կազմում դարձել էր Ամերիկայի գավաթակիր: 2001-ին ՊՍԺ-ի հետ նվաճել էր Ինտերտոտոյի գավաթը, իսկ հաջորդ տարի դարձել էր աշխարհի չեմպիոն: «Բարսելոնի» կազմում Ռոնալդինյոն 2005/2006-ին արժանացել է չեմպիոնների գավաթակրի տիտղոսին, 2 անգամ նվաճել է Իսպանիայի չեմպիոնի կոչումը եւ Սուպերգավաթը: 2005-ին նա Բրազիլիայի հավաքականի կազմում դարձել է Կոնֆեդերացիաների գավաթի հաղթող, իսկ 2011-ին «Միլանում» Իտալիայի չեմպիոն է հռչակվել:

Լիբերտադորեսի գավաթի լավագույն ռմբարկու ճանաչվեց բրազիլացի Ժոն, որը դարձավ 7 գոլի հեղինակ: Նա նախկինում հանդես է եկել Մոսկվայի ԲԿՄԱ-ում:

## ՇԱԽՄԱՏ

# Մարիա Կուրսովան առաջատարներից մեկն է



**Բելգրադում ընթացող շախմատի Եվրոպայի կանանց առաջնության 2-րդ տուրում հայաստանցի շախմատիստուհիներից միայն Մարիա Կուրսովային հաջողվեց հաղթանակ տոնել: Նրա մրցակցուհին Կատարինա Նեստորովիչն էր: Այդ հաղթանակի շնորհիվ Կուրսովան վաստակեց 2 միավոր եւ 23 շախմատիստուհիների հետ գլխավորեց աղյուսակը:**

**Լիլիթ Գալոյանը հաշտություն կնքեց Նատալյա Ժուկովայի հետ, իսկ Լիլիթ Մկրտչյանը ոչ-ոքի խաղաց Ելենա Սեդինայի հետ: 2 Լիլիթն էլ 1,5 միավոր ունեն: Առաջին կես միավորը վաստակեց միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը՝ հաշտություն կնքելով Թամարա Կեզելեի հետ: Իսկ ահա ռուսաստանցի Ալինա Բալայանը կրկին պարտվեց: Նրա մր-**

# «Սպարտակը» ժխտում է «Կուբանի» հետ բանակցելու փաստը

**Ռուսական «Սպորտ-Էքսպրեսի» տեղեկացմամբ, Մոսկվայի «Սպարտակի» եւ Կրասնոդարի «Կուբանի» միջեւ բանակցություններ են ընթանում Արաս Օզբիլիսի տեղափոխության հարցի շուրջը: Ըստ թերթի, «Սպարտակը» պատրաստ է նրա տրանսֆերի համար 10 մլն եվրո վճարել, սակայն «Կուբանը» չի համաձայնվում:**

**Երկու ակումբների միջեւ բանակցությունների փաստը հերքել է «Սպարտակի» գլխավոր տնօրեն Ռոման Ասխաբաձեն. «Մենք ոչ մի բանակցություն չենք վարում «Կուբանի» հետ, խոսակցություններն էլ չենք մեկնաբանում: Օզբիլիսը «Կուբանի» ֆուտբոլիստ է, որի մասին ոչինչ չեմ կարող ասել»:**

**Հիշեցնենք, որ Յուրա Մովսիսյանի «Սպարտակ» տեղափոխության ժամանակ էլ մոսկովյան ակումբի ղեկավարությունը մինչեւ վերջին պահը ժխտում էր այդ փաստը:**

# Շախմատի ՀՀ հավաքականը մարզվում է Ծաղկաձորում

**Շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականն այս օրերին Ծաղկաձորում ուսումնամարզական հավաք է անցկացնում՝ նախապատրաստվելով Եվրոպայի եւ աշխարհի թիմային առաջնություններին: Արշակ Պետրոսյանի գլխավորությամբ հավաքին մասնակցում են օլիմպիական չեմպիոններ Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանը եւ Տիգրան Պետրոսյանը: Իսկ Սերգեյ Մովսիսյանն առայժմ մարզվում է անհատական ծրագրով:**

**Եվրոպայի թիմային առաջնությունն անցկացվելու է նոյեմբերի 7-18-ը Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում: Այդ մրցաշարի ավարտից ընդամենը 6 օր անց Թուրքիայի Անթալիա քաղաքում կմեկնարկի աշխարհի թիմային առաջնությունը: Ինչ խոսք, նման խիստ գրաֆիկով 2 կարեւորագույն մրցաշարերի մասնակցությունը շախմատիստներից առաջին հերթին ֆիզիկական լավ պատրաստություն կպահանջի: Բացառված չէ, որ Եվրոպայի թիմային առաջնությունում մեր հավաքականի կազմում հայտնվեն մի քանի երիտասարդ շախմատիստներ:**

# Կարեն Գրիգորյանն առաջին կես միավորը կորցրեց

**Իսպանիայի Սիտգես քաղաքում անցկացվող մրցաշարի 3-րդ տուրում Կարեն Գրիգորյանն առաջին կես միավորը կորցրեց՝ ոչ-ոքի խաղալով Դավիթ Արենասի հետ: 2 անընդմեջ հաղթանակներից հետո Հովիկ Հայրապետյանը պարտվեց Օսկար Հաուգեին:**

**Տուրը հաղթական էր Կարեն Մովսիսյանի համար, որը պարտության մատնեց Լազարո Լորենցոյին: Մովսիսյանը Գրիգորյանի հետ վաստակել է 2,5 միավոր եւ հետապնդում է 3 միավոր ունեցող 5 առաջատարներին: Մարկ Բասենցյանը վաստակել է 2 միավոր: Նա հաշտություն կնքեց Խավիեր Ավիլայի հետ:**

# Ղարամյանը կիսեց միավորը

Բիլի շախմատի մրցաշարի 3-րդ տուրում Տիգրան Ղարամյանը ոչ-ոքի խաղաց Հուանգ Քիհանի հետ: 3 տուրից հետո Ղարամյանը 2 միավոր ունի: 3-ական միավորով առաջատարներն են Յան Սմիթսը, Դրագան Սոլակը եւ Ջժաո Հունն:

# Իգուաինն ու Ռեյնան տեղափոխվեցին «Նապոլի»

**Իտալական «Նապոլիի» նախագահ Աուրելիո Դի Լաուրենտիսը պաշտոնապես հաստատել է, որ Մադրիդի «Ռեալի» հարձակվող Գոնսալո Իգուաինը եւ «Լիվերպուլի» դարպասապահ Պեպե Ռեյնան համալրել են թիմի կազմը: Երկուշաբթի նրանց կներկայացնեն թիմի երկրպագուներին:**

**Արգենտինացի հարձակվողը 5 տարվա պայմանագիր է կնքել «Նապոլիի» հետ, որը նրա տեղափոխության դիմաց 37 մլն եվրո է վճարել: Իսկ Ռեյնան «Նապոլիում» հանդես կգա վարձավճարով:**

**Իգուաինը 2007-ին էր «Ռիվեր Փլեյթից» տեղափոխվել «Ռեալ»: Իսպանիայի առաջնություններում նա 190 խաղում 107 գոլ է խփել: 25-ամյա ֆուտբոլիստը 33 խաղ է անցկացրել Արգենտինայի հավաքականում՝ դառնալով 21 գոլի հեղինակ:**

**Պեպե Ռեյնան 8 տարի պաշտպանել է «Լիվերպուլի» դարպասը: Երբ «Լիվերպուլը» թիմում ընդգրկեց «Սանդերլենդի» դարպասապահ Սիմոն Մինյոլային, Պեպեին որոշեցին վարձավճարով տրամադրել «Ռեալին»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

# Օրվա հետքերով

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

## Թոռներն իրենց պապիկի՝ Երվանդ Պապայանի 100-ամյակին

Վաստակաշատ մտավորական, կրթական եւ հասարակական գործիչ Երվանդ Պապայանի ծննդյան տարեդարձի եւ Բըրբենկում հունիսի 16-ին Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արեւմտյան թեմի կազմակերպությամբ եւ Հովնան արք. Տերտերյանի հովանավորությամբ կայացած հոբելյանական հանդիսության առիթներով նրա թոռները՝ **Երվանդ** եւ **Թալին Պապայանները** բաց նամակ են հրապարակել «Արմինյըն միրըր-սփեքթեյթրի» էջերում, որտեղ ասվում է, որ եթե բոլորի համար նա եղել է «պարոն տնօրեն», ապա իրենց համար նա պարզապես «դեդի» (պապիկ) է եղել:

«Մեր մանկության ազատ ժամանակների զգալի մասը մենք անցկացնում էինք Լոս Անջելեսում՝ մեր պապիկի ու տատիկի հետ: Այդ օրերը անջնջելի տպավորություն են թողել: Անթիվ-անհամար ողջույններից ու հյուրասիրություններից հետո մենք առանձնանում էինք դեդիի հետ հյուրասենյակում, որտեղ նա համբերությամբ հետաքրքրվում էր մեր առօրյայով, շաբաթօրյա դպրոցի դասերով եւ մեր ձեռքբերումներով: Երբեմն հուշում էր մեզ անհրաժեշտ հայերեն բառը, որ մենք մոռացել էինք: Այդպես է, որ, ի դեպ, մենք սովորեցինք ավելի մաքուր հայերեն խոսել: Նրա հետ անցկացրած ժամերը դեպի քաղաքակրթություն կատարած այցի նման էին: Զբոսանքների գնալիս մենք անպայման պետք է մտնեինք «Ապրիլ» գրախանութ, որտեղ ծանոթանում էինք հին ու նոր հեղինակների գործերին, մանկական նկարազարդված գրականությանը: Երեկոյան նա դրանից հատվածներ էր կարդում մեզ համար:

Երբեմն խաղեր էինք խաղում միասին եւ մեր հաղթանակի դեպքում՝ ոգեւորության, իսկ պարտության դեպքում՝ հուսալքության պահերին խորհուրդ էր տալիս «հաղթության մեջ լինել համեստ, իսկ պարտության մեջ՝ վեհանձն»: Նրա մեջ դաստիարակն ու ուսուցանողը միշտ արթուն էին: Մեծ էր նրա սերը դեպի մեր ժողովուրդն ու մշակույթը: Այդ սերը նա ժառանգել էր հորից՝ երջանկահիշատակ տեր Ներսեսից:

Փարիզում մասնագիտական կրթությունն ավարտելուց հետո նա կամ պետք է մնար այնտեղ եւ դասավանդեր, կամ վերադառնար Հալեպ՝ Կիլիկյան վարժարանում աշխատելու: Նա ընտրեց երկրորդ տարբերակը եւ կրթական մշակ մնաց մինչեւ իր կյանքի վերջը:

Լիբանանյան քաղաքացիական դաժան պատերազմի օրերին նա նվիրումով հանձն առավ տնօրենի պաշտոնը եւ հմտությամբ վարեց: Մի քանի տարի առաջ այդ դպրոց կատարած մեր այցելության ժամանակ ուրախությամբ զգացինք, որ նրա շունչն ու ոգին դեռ առկա են այնտեղ: Եվ ոչ միայն շենքի պատերի ներսում, այլեւ հազարավոր ուսանողների հոգիներում, որոնց վրա թողած իր ազդեցությամբ էին նրանք կերտել իրենց ապագան: Նա հայրություն էր արել նրանց մեր պատմության ամենադաժան օրերին: Այդ պատճառով էլ նրանք մինչ օրս հիշում եւ հարգում են նրան:

Այդ մարդկանց թվին է պատկանում **Անժել Քյուրքչյանը**, որն իր հեղինակած «Կյանքիս հիշարժան էջերից» հուշագրքում («Էդիթ Պրինտ» հրատ., Երեւան, 2012) բազմաթիվ էջեր է տրամադրել իր ուսուցչին:

«Իմ յարգարժան ուսուցիչ պարոն Երուանդ Պապայեան, սոյն աշխատութիւնը մեր հազարազանձ մայրենիի նկատմամբ ձեր ներարկած անհուն սիրոյ ու մեծ



նուիրումի եւ սերմանած հունտերի ծլարձակման ու հասունացման համեստ հասկափունջն է... զայն ձեզի սիրով կ'ընծայեմ... 25.04.2011թ., Երեւան»:

Իսկ Պապայանի դաստիարակչական եւ ազգային-հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ նա գրում է.

«Դուք մեկն էք սփիւռքի այն անխոնջ մշակներէն, որոնք սրբութեամբ կը կատարեն սփիւռքահայ ուսուցչի շնորհակալ, բայց եւ անչափ դժուարին առաքելութիւնը: Դուք միշտ բարին ու գեղեցիկն էք սերմանել հայ մանուկներու հոգիին ու սրտին մէջ, սերմանել հայրենանուէր զգացումներ: Դիմագրաւելով բոլոր դժուարութիւններուն ու խոչընդոտներուն՝ Դուք ձեր ամբողջ գիտակցական կեանքը բոլորանուէր ու անմնացորդ նուիրաբերել էք սփիւռքահայ մանուկներու հայեցի կրթութեան ու դաստիարակութեան վեհ ու ազնիւ գործին: Տարիներ շարունակ ձեր անխոնջ ուսերուն վրայ կրեր էք հայ գրողներու պատկառելի համաստեղութեան երախտաւորներէն մէկուն՝ Վ. Թէքէեանի անունը կրող վարժարանի տնօրէնի պատասխանատուութիւնը՝ քաջ գիտակցելով հայ դպրոցի հայապահպանման անփոխարինելի դերը սփիւռքի մէջ: Եւ սա իրաւ հերոսութիւն է, յատկապէս ներկայ պայմաններուն մէջ»:

Պապայանի բազմաշերտ գործունեություններին նվիրված հոբելյանները նշվել են հավուր պատշաճի մեկից ավելի անգամներ: Նա խոշորագույն դերակատարություն է ունեցել իր գլխավորած հաստատության՝ Վ. Թեքեյանի անվան վարժարանի նոր շենքի կառուցման եւ նրանում կրթական մակարդակի բարձրացման մեջ: Նա այդ կրթական օջախը վերածել է «հայրենասիրութեան եւ ազգասիրութեան իսկական միջնաբերդի մը՝ հայահոծ Բուրջ Համուդի մէջ»:

Որպես ազգային-հասարակական գործիչ, նա ընդմիշտ ջատագովել է մայր հայրենիքի իրականությունն ու բարգավաճումը եւ Սուրբ Էջմիածնի անփոխարինելի առաքելությունը: Սփյուռքի զանազան գաղթօջախներ կատարած այցելությունների ժամանակ իր հայրենասիրական ճառերով խանդավառել է սերունդներին, ամրապնդել հայրենիք-սփյուռք փոխհարաբերությունները: Ամուր է եղել նաեւ կապը իր եւ իր աշակերտների միջեւ:

Պատկառելի տարիքի հասած վաստակաշատ մանկավարժ եւ լեզվաբան, դասագրքերի հեղինակ Անժել Քյուրքչյանի վերոնշյալ հուշագրքում բազմաթիվ են նման օրինակները:

«Սիրելի Անժէլ, բնութիւնը օժտած է քեզ մտքի արտակարգ կարողութեամբ, իմաստութեամբ, նաեւ՝ աշխատանքի հզօր կամքով: Բացառիկ աստուածային շնորհներ, որոնք արտայայտութիւն են գտած ցարդ հրատարակուած գիրքերուդ եւ այս նոր՝ «Հայերենի մակբայներ» հոյակապ հատորիդ մէջ», գրում է Պապայանը 2011-ի օգոստոսի 16-ին՝ Նորթրիջից: Հատկանշական է երկտողի երկրորդ պարբերությունը, որտեղ խոստովանում է. «Տեսողութիւնս 5060 տոկոսով տկարացած է, խոշորացոյց կ'օգտագործեմ երբեմն: Սակայն յաջողեցայ կը կարծեմ, գոնէ որոշ չափով ծանօթանալ այս պատկառելի գիրքերիդ»: Սա նշանակում է, որ ուժեղ կամքի տեր այս անձնավորությունը խոչընդոտների առաջ ընկրկողը չէ, այլ՝ երիտասարդական ավյունով պայքարող մի անհատականություն: Ասվածի վկայությունն է նաեւ դրանից տասը տարի առաջ 2001-ի սեպտեմբերի 30-ին դարձյալ Նորթրիջից գրված մի այլ երկտողի բովանդակությունը. «Սիրելի Անժէլ, սեպտեմբերի 22-ի վիրահատութիւնէն ետք, թէեւ դանդաղ, սակայն հետզհետէ կը վերականգնեմ ուժերս: Արդէն քանի մը օրէ ի վեր սկսած եմ սրտիս համար անհրաժեշտ քալելու մարզանքին»:

Կան նաեւ ասվածի այլ հաստատումներ, բայց բավարարվենք այսքանով: Եվ մաղթենք, որ այդ կամքի ուժը երկար ընկերակցի նրան: Քաջառողջություն եւ սիրելիներով շրջապատված լինելու բավարարվածություն անզուգական հային՝ Երվանդ Պապայանին:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

---

*Հավելված*
*ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի*
*25 հուլիսի, 2013թ. թիվ 14-Լ հրամանի*

*Վ.Գ.Շահինյան*

## ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

***ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի թափուր պաշտոնի համար***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

***ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի երկու թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին***

Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության 60 տարին չլրացած այն քաղաքացին, ով՝

ա) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է,

բ) տիրապետում է գրական հայերենին

2. Չունի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշմամբ հաստատված ցանկով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատներն եւ հիվանդությունները

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաև 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած և պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

ա) մինչև նշանակումը չունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

դ) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,

ե) գտնվում է քրեական հետապնդման մեջ,

զ) չի համապատասխանում 1-ին կետով սահմանված պահանջներին:

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչի թափուր պաշտոնը համալրելու համար ներկայացվող փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին.

բ) անձը հաստատող փաստաթուղթ և պատճենը,

գ) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ և պատճենը,

դ) աշխատանքային գրքույկ և պատճենը կամ քաղվածք,

ե) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ և պատճենը (եթե հավակնորդը արական սեռի է),

զ) Տեղեկանք՝ քննիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշման,

է) հայտարարություն՝ դատապարտված կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու մասին,

ը) երկու լուսանկար՝ 3x4 չափսի

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

***Մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, որն իրականացվում է հատուկ քննչական ծառայության պետի կողմից հաստատված՝ ծառայության ծառայողների ատեստավորման ծրագիր-հարցաշարի հիման վրա /www.investigatory.am/***

***Մրցույթն անցկացվելու է 2013թ. օգոստոսի 28-ին՝ ժամը 11 00-ին,***

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է համարվում 2013թ. օգոստոսի 20-ը***

***ՀՀ գլխավոր դատախազության շենքում՝ /Վ.Սարգսյան 5/,***

***ՀՀ հատուկ քննչական ծառայություն (5-րդ հարկ)***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժինը /հեռ. 511-684, 511-662 /***

---

## Կորել է

«Հայ ձկնաբույծների միավորում» Հասարակական կազմակերպության պետական գրանցման պետ.ռեգիստրի վկայականը: Գտնողին խնդրում ենք զանգահարել 098-14-12-13:

**Սրբագրում եւ խմբագրում**
**ամեն ծավալի ու բովանդակության հայերեն տեքստերի, գրքերի**
**E-mail: xachagox@mail.ru,**
**հեռ.՝ 094 48-68-03:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: